



ՇԱԲԱՐԱՐԵՐՐ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ

16^{րդ} ՏԱՐԻ.—ԹԻԻ 18. (557)

31 ՄԱՅԻՍ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿՈՎԵՍՍԻ ՀԱՅԵՐԸ

Թ. Գ. Ս. Կ. Գ.

Ֆրիսիի Նիշէ (Ուսումնասիրութիւն)

Մ. ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

ԽՆԶ ԿՐՍԷ ՕՐԷՆՔԸ

Հնդկանոր Մանոթուրիւններ

Մ. Վ.

Անհատականութիւններ

Դէորդ Գափամանեան

ՋԱՊԷԼ ԵՍՍՅԵԱՆ

Սրբապետութիւն (Գերմանիա)

ԱՐՏ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Սիրոյ Սրգեր

Ափստանք

ԼԵԻՈՆ ՔԻՐԻՇՃԵԱՆ

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ

1. Մտքին Դերը՝ Բժշկութեան Մէջ

2. Կամքին Ոյժը

3. Քննադատութիւն եւ Բժշկները

ԵՐԵՒԱՆ

ԿԱՆԱՆՑ ԲԱԺԻՆԸ

Կնոջ Տիպարներ

ԴՐԻՉ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Պոլսոյ Հրապարակը (Վեցամսեայ Տեսութիւն)

Խ. Պ.

ՆՈՐԵՐՈՒ ԲԱԺԻՆԸ

Մանգրուէ

Ա. ԴԼՈՐԴԵԱՆ

«Ծաղիկ»ի նամակագիր

«Ծաղիկ»ի Թղթակցութիւնները

Նամակ կարգար եւ է գրութիւն պէտք է ուղղել

ԽՈՒՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

درعليه ده غلطه ده قورشونلو خاتمه نومرو ۷ زاسه فزته سی اداره سی

ԽՈՒՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԴՄԱՂԻ

Կալաթա, Քուրժումլու Խան քա. 7

RÉDACTION DE LA REVUE „DZAGHIK“

Kourchoum Han N° 7, Galata, Constantinople.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

ԱՆԳԼԵՐԵՆԷ-ՀԱՅԵՐԵՆ

ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆԸ

Որ կը լրացնէ կարեւոր պէտք մը ու.

սանդղներու, ճամբորդներու եւ առեւտրա.

կան գործերով զբաղողներու համար:

Գ/ն 8 ՂԻԶ

Կը գտնուի բոլոր գրավաճառներուն քով:

Կեդրոնատեղին է Սադաեան Տպարան

Մեծաքանակ զնոդներու գեղջ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱՆԵԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԾԱՂԻԿԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԽԻԿ Է ԲԱՑԱՐՁԱԿԱՊԷՍ

Գաշառներու համար	տարեկան	60	դր.
„ „	վեցամսեայ	30	„
Պոչոյ համար	տարեկան	50	դր.
„ „	վեցամսեայ	25	„
Արտատահմանի համար	տարեկան	14	ֆր.
„ „	վեցամսեայ	7	ֆր.

Բաժանորդագրութիւնները կը սկսին սաճն սանոյ 1ին

ՁԵՌՔԷ ՀԱՏԸ ՔԱՌԱՍՈՒՆ ՓԱՐԱՅ

Առանց բաժանորդագրի ներխափման բաժանորդագրութիւնը համար եղած գրութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Շաբաթաթերթիս հին թիւերը կը ծախուին Պոլիս, Կամուրջին զլուխ լրագրաւաճառ Միսաք աղային քով



ԾԱԶԻՎ



ՇԱԲԱՐԱՐԵՐՐ

ԱՄԷՆ ԿՈՄՍՈՒՆ ԿԱՍՏ ԳԵՌՈՒԹԻՒՆ ՊԵՏԻ ԵՆՈՒՂԱԼԵԼ
ԽՈՐԱՍԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՆՈՒՂԱԼԵԼ

16^{րդ} ՏԱՐԻ. — ԹԻՒՆ 18. (557)

31 ՄԱՅԻՍ 1903

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԵՐԸ

Կովկասում Հայերը գրեթե միակ բարեգործողներն են, թե՛ իրենց հարստութեան եւ թե՛ զարգացած հանրային բնագործի շնորհիւ։ Այդ խոստովանում են նոյն իսկ եւրկապի օտարականները։ Սակայն հետաքրքիրն այն է, որ չնայած հանրային ու մասնավոր նկատմանը, Հայերը չարունակում են սփռել իրենց բարեգործությունը անխտիր թե՛ Հայերի եւ թե՛ ոչ-Հայերի վրայ։ Այդ համագումարը մի կողմից պայտուցանում է Հայերի ոչ կրքոտ խառնուածքը, միւս կողմից տոհմային արժանապատուութեան բացակայութիւնը։ Եւ որովհետեւ վերջինը շատ շեշտում է Կովկասեան Հայերի մէջ, կ'ուզեմ հետեւեալ տողերում այդ տեսակէտից քննադատել տեղիս Հայերի բարեգործութեան կերպը։

Վերցնենք, որինակի համար, այդ տեսակի վերջին նորութիւնները։

Մօտ մի ամիս առաջ Պ. Ա. Մանթաշեանը, Կովկասեան դրամատէրիցի ամենահարուստը, հեռագրեց Պետերբուրգ Լուսաւորութեան Նախարարութեան խորհուրդի անդամներից մէկին, որ կը նուիրէ եօթ հարիւր հազար ռուբլի, եթէ Տփլիսի սուրբ Բարդուղիմէոսի վրայ եւ է բարձրագոյն դպրոց։ Անցաւ երկու շաբաթ, եւ մի ուրիշ Հայ, յայտնի միլիոնատէր, Պ. Մ. Արամեանը յայտնեց տեղիս քաղաքագլխին, որ նուիրում է հարիւր հազար ռուբլի յօգուտ քաղաքային հիւանդանոցի նոր շէնքում։ Վերջինը արդէն պաշտօնապէս ընդունուեց, իսկ առաջինը մասին ցայժմ ոչ մի պատասխան չկայ մայրաքաղաքից։ Ռուս կառավարութիւնը վարստում է բացաւ Տփլիսում բարձրագոյն դպրոց, որովհետեւ մեր տեսակէտից անկախ, շատ հետաքրքիր է նաեւ տէրութեան վերաբերումը դէպ ի «անգրկովկասեան բարձրագոյն դպրոցը», մենք աւելի մանրամասն կանգ կ'առնենք այդ հարցի վրայ։

Արդէն վաղուց է, որ Տփլիս քաղաքը ձգտում է ունենալ մի որ եւ է բարձրագոյն դպրոց, եւ որովհետեւ Կովկասը հարուստ է հանքերով եւ միւս կողմից, իր

գիւղատնտեսութիւնը վերին աստիճանի վատ ու տարրական դրութեան մէջ է, տեղիս զանազան գիտական ու արհեստագիտական (technique) ընկերությունները քննելով այդ հարցը, դերադասեցին որ բարձրագոյն դպրոցը լինի մասնագիտական, կամ պոլիտեխնիկում, կամ էլ բարձրագոյն գիւղատնտեսական դպրոց։ Տեղիս քաղաքային ինքնավարութիւնը նոյնպէս շատ մեծ եռանդով վերաբերուեց այդ մտքին եւ ի վերջոյ կանգ առաւ պոլիտեխնիկումի վրայ, այդ մասին ստանձնեց նախաձեռնութիւնը եւ աշխատեց գործը գլուխ բերելու։ Տփլիս քաղաքը իր կողմից խոստացաւ հարիւր հազար ռուբլի, ինչպէս եւ ուրիշ քաղաքները, առեւտրական ու բանկային հիմնարկութիւնները որոշեցին բաւականին նշանաւոր գումարներ յատկացնել այդ դպրոցին։ Սակայն այդ բոլորն ցանկութիւններէն, որով լամբողջ Անգրկովկասը ձգտում էր այդ դպրոցը ունենալ, հոգալ նրա պիտոյքները, մասնակցել ծախսերի մէջ, կառավարութիւնը պատասխանեց, որ խոստացուած գումարները չնչին մասն են կազմում այն ծախսերին հանդէպ, որ պահանջում է մի պոլիտեխնիկում, եւ որովհետեւ կառավարութիւնը չէ ուզում Անգրկովկասի վրայ այդ դպրոցի պատճառով մեծ ծախսեր անել, ուստի նա մերժում է Տփլիսի դպրոցին խնդիրը։

Պէտք է ասել, որ ուրիշ պատասխան դրեթէ չէր էլ սպասուում, որովհետեւ արգելքները աւելի հիմնական են ու աւելի լուրջ։

Անցան տարիներ, եւ կրթական այս հարցը մնում էր նոյն դրութեան մէջ։ Վերջերս, մի երկու ամիս սրանից առաջ, եկաւ Կովկաս ուսումնարանները քննելու, Լուսաւորութեան Նախարարութեան անդամ, իշխան Գոլիցինը։

Մի քանի անձինք այցելեցին սրան եւ հարց բարձրացրին Պոլիտեխնիկումի մասին։ Իշխանը, կարծեմ, նոյնպէս պատճառաւորեց դժուարութիւնը դրամի պակասութիւնով, հազիւ նա հեռացաւ Տփլիսից, մեր քաղաքագլուխը, ինչպէս քաղաքային խորհուրդի մի քանի անդամները միասին գնացին Պ. Մանթաշեանի

մօտ, խնդրելով որ նա որոշ գումար նուիրէ յօգուտ Պոլիտեխնիկումի եւ այնպիսի գումար, որով կարելի լինէր կառավարութեան ցուցած պատճառաբանութիւնները գոհացնել։ Ի նկատի ունենալով որ մօտ 300,000 ռուբլի խոստացուած է զանազան հիմնարկութիւնների կողմից, Պ. Մանթաշեանը յայտնում է, որ նուիրում է վեց հարիւր հազար ռուբլի, եւ հարիւր հազար ռուբլի առանձին, որպէս զի այն վերջին գումարի տոկոսներից իր անուան թոշակ նշանակուի չքաւոր ուսանողներին։ Անմիջապէս նա հեռագիր տուեց իշխան իշխան Գոլիցինին իր արած որոշման մասին։

Մանթաշեանի նուիրատուութեան մասին լուրը տարածուելուն պէս, տեղիս հասարակութեան մէջ զանազան կարծիքներ լսելի եղան։ Ռուս, Վրացի եւ այլք, ի հարկէ, գովում էին այդ որոշումը, Հայերի մեծամասնութիւնը նոյնպէս, բայց կայ մի փոքրամասնութիւն, որ անբաւական է եւ չէ ողջունում Պ. Մանթաշեանի որոշումը, եւ հա թէ ինչու։

Երբեմն Կովկասցիք, Հայերը, Վրացիք, Ռուսները եւ Tutti quanti, զգում էին իրանց որպէս «Կովկասցիք» մի երկրի զաւակներ։ Բայց ահա ութսունական թուականներից սկսած, երբ Ռուս կայսր Ալեքսանդր Գ. չէ հռչակեց որ Ռուսաստանը պիտի լինի Ռուսների համար, ամենայն տեղ սկսեցին ընդունիլ այդ սկզբունքը, այսպէս եւ Կովկասում։ Վրացիք գրեթէ տղատ մնացին այդ խորութիւնից, որպէս օրթոթոքս, թէ՛ կուլտուրական եւ թէ՛ տնտեսական ուսումնարարական մամուլը սկսեց մի ու ժեզ ու անընդհատ արշաւանք հպատակ օտարականների դէմ։

Այսպէս վերջերս դրաւեց 200 Հայ դպրոց իրենց կալուածներով, Հայ-կուլտուրական ձգտումները ջլատեց։ Միւս կողմէ Կովկասեան Վրացիք, վաղուց արդէն նախաձեռնելով Հայերի տնտեսական յաջողութեանը, օգտուելով այս ամենից, ձայն բարձրացրին, թէ Վրացի ժողովուրդի տնտեսական ու բարոյական անկման պատճառը Հայերն են, որոնք բնակութիւն հաստատած են ամբողջ Կովկասի մէջ, նոյն իսկ Վրաստան։ Այդ խօսքերը դարձան

նշանաբան Վրաց մամուլի ու հասարակութեան մէջ, որը օր ըստ օրէ աւելի ուժեղանում, տարածւում եւ լսելի է լինում:

Իրերի ներկայ գրութիւնը այժմ այսպէս է. գրեթէ արգելուած է Հայերին որ եւ է մի գործ, որը կարող է նպաստել իրենց լիզուլին, գրականութեանը, լուսաւորութեանը: Երկու բարեգործական մարմինների կանոնադրութիւնները փոխուեցին. այժմ կարելի է օգնութիւն հասցնել միայն նիւթական կարիքներին, այսինքն անուշադու, բնակարաններով, դեղերով, իսկ որ եւ է կրթական ձեռնարկներ կամ նոյն իսկ չքաւոր աշակերտների ուսման վարձ տալը, այդ տեսակ բաներ արգելուած են: Հրատարակչական Մարմինը փակուեց, դպրոցները գրաւուեցան, եւ ի հարկէ ոչ ոք դպրոցներին դրամ չէ նուիրում:

Միւս կողմից տեղիւ օտարազգիները ոչ մի կողմէի չեն նուիրում Հայերի պիտոյքներին. բարեգործական երեկոյթներին, պարահանդէսներին, որ եւ է ժողովարարութիւններին օտարազգիները ներկայ չեն լինում, չեն մասնակցում: Իսկ տեսէք թէ ինչ գումարներ են գնում իրանց օգտին Հայերի գրականներից: Վրացիք, իրենց հասարակայնի պիտոյքների համար երբ ժողովարարութիւններ են անում, առանց այլ եւ այլի սկսում են Հայերից, նոյնպէս եւ միւսները: Բացի դրանից տեղիւ Հայ վաճառականները թէ՛ կենդանութեան օրօք եւ թէ կտակելով, ահագին գումարներ են յատկացնում ընդհանուր բարեգործութեանը, յայտնելով որ այդ գումարներից իրաւունք ունի օգտուել ամեն մի ոք, առանց դաւանանքի ու ազգութեան խտրութեան: Վրացիների մէջ այդ տեսակ բան չկայ, թէպէտ այն էլ պիտի աւած, որ տեղացի բարեգործութիւնը դրանց մէջ չաւտ չնչին է: Բայց դարմանալին այն է, որ նոյն այն հիմնարկութեանց մէջ, որոնց Հայերը բաւականին մեծ դրամներ են նուիրել, օրինակ, գիմնադրոնների եւ ուսուցական դպրոցների, տեղի ունի ոչ-բարեացակամ վերաբերում դէպի Հայերը:

Այս տեսակ օրինակներ չաւտ կարելի էր բերել ցոյց տալու համար, թէ որքան տարբեր են մի կողմից Վրացիների ու ուսուցական վերաբերումը դէպի Հայերը, եւ սրանց դէպի Վրացիները: Այդ տարբերութիւնը մինչեւ անգամ առիթ է տուել Վրաց մի քանի հրապարակախօսներին ականարկ անել կովկասահայերի արժանապատուութեան մասին:

Եթէ ծիծաղելի է եւ չափազանցութիւն մի Վրացու կողմից, որը յայտնել էր տեղական լրագրներում, որ նա կը նուիրէ «մի հաղար» րուբլի, եթէ հիմնուելիք Պօլիտեխնիկումը կրէ Վրաց մի նախկին աղանդականի անունը, նոյնպէս եւ ցանկալի է, որ Հայերը այդպիսի թեթեւութեամբ

ահագին գումարներ նուիրեն կովկասահայերու: Բարեգործական պիտոյքները առանց այն էլ չաւտ են: Ուրեմն կովկասի Հայերը նախ հարկ է իրանք իրանց բաւեն: Նա մանաւանդ, որ ուրիշներին տալով նրանք, յարգանք ու շնորհակալութիւն չեն գրաւում, այլ ծաղր, արհամարանք:

700,000 րուբլի մի ահագին գումար է. եւ այդ տեսակ նուէր յայտնի չէ կովկասեան տարեգրութեան մէջ. եւ ինչո՞ւ գրկել էջմիածնի վարժարանը այդ գումարից ու նուիրել մի օտար դպրոցին ուր վերջ ի վերջոյ Հայ ուսանողների թիւը ու եւ է կերպով կը սահմանափակուի:

Թերեւս Պ. Մանթաշեանը, որ իր առաջարկին պատասխան չէ ստացած, համարէ իրան այսուհետեւ աղատ:

ԹՂԹԱԿԻՑ

Փ Ր Ի Տ Ր Ի Յ Ն Ի Չ Է

ԳԵՐՄԱՆ ԻՄԱՍՏԱՍԷՐ

(1845—1900)

ԵՐԿՐՈՐԴ ՅՕԴՈՒԱԾ

Նիչէի համար այսօրուան Եւրոպացին «փոքրցած, պզտիկցած կենդանի մըն է խալիքի, քիչ մը բարի, քիչ մը հիւանդակախ, միջակ»: «Արդի մարդը կը տառապի տկարացած անհատականութենէ մը» կը գոչէ Նիչէ եւ դայն կ'անուանէ, «ինկող անցեալի մը աշկերտը, զօրաւոր սերունդներու տփօյն եւ ազագուն վերջին մնացորդը» (Անտիպոսի Նիկոտոմիէս):

Անկումը (Décadence) ընդհանուր է այսօր Նիչէի համար եւ ամէնքս ծնունդն ենք այդ անկումին, իբր ժամանակին դաւակները: Բոլորովին անկապալտ չեշտով մը, Նիչէ Բարիէն ու Չարիէն Անդիէն իր երկասիրութեանը մէջ կ'ըսէ. «Ինքնասպանութեան մտածումը միջիթարութեան զօրաւոր միջոց մըն է, ատով մարդս չաւտ մը չար զիշերներ ետին կը ձգէ»: Ամէն իմաստասիրութիւն անկարող է բան մը փոխել արդի մարդուն հոգեկան կացութեանը մէջ, որ վերին աստիճանի քայքայուն ու աններդաշնակ է: Միւս կողմէ մարդուն չի հրամցուիր ամբողջացած, կտտարեալ, յստակ կեանքի իմաստասիրութիւն մը. ամէն տեղ «գրութիւններ» ու մասին կը խօսուի որոնք իրարու կը հակասեն եւ իրար կը ջնջեն. եւ մարդն ալ այդ բոլոր գրութիւնները, ըլլան հին կամ նոր, ուսումնասիրելէ վերջ, նորէն նոյնն է, ինչ որ էր առաջ: Եւ սակայն զանազան տեսակէ ճշմարտութիւններ միանգամայն չեն կրնար գոյութիւն ունենալ, ճշմարտութիւնը մէկ է միայն. ո՞ւր է սակայն անիկա, ո՞վ կ'ուսուցանէ դայն:

Մարդկային, Համամարդկային երկասիրութեան մէջ Նիչէ կը մատնանչէ

կեանքը «իբր ճանաչողութեան միջոց մը». «Դէպի լոյս թող ըլլայ քու վերջին շարժումդ. ճանաչողութեան աւազ մը վերջին հնչիւնդ ալ»: Նիչէ՛ հիմնովին անկապալտ իմաստասէրը՝ կը գոչէ. «Ո՛չ, կեանքը զիս յուսախաբ չըբաւ. տարուէ տարի դայն աւելի ճշմարիտ կը գտնեմ, աւելի ցանկալի եւ աւելի խորհուրդներով լեցուն եւ ասիկա՝ ալն օրէն ի վեր, ուր մեծ ազատարարը՝ այն մտածումը վրաս եկաւ, թէ կեանքը ճանաչողին փորձարկութիւնը պէտք է ըլլայ—ոչ թէ պարտականութիւն մը, տքնութիւն մը կամ խաբէութիւն մը—եւ նոյն ինքը ճանաչողութիւնը—որ ուրիշներու համար կըրնայ ըլլալ, զոր օրինակ, հանգստի անկողին մը, կամ ժամանց մը, կամ պարապանցում ատեն մը—ինծի համար վտանգներու եւ արդիւնքներու աշխարհ մըն է, ուր կը գտնուին նաեւ ամէնէն բարձր զգացումները»: «Կեանքը ճանաչողութեան միջոց մը» ահա այս սկզբունքը սրտին մէջ, մարդ ոչ միայն յանդուգն կ'ըլլայ այլ մանաւանդ կրնայ գուարթօրէն ապրիլ ու գուարթօրէն խնդալ կ'ըսէ Նիչէ:

Նիչէի Չառադուդսիւան կ'ուսուցանէ մեզ թէ «ստեղծագործելը մեծ փրկութիւն է ցաւին եւ կեանքին թեթեւացումը»:

«Կամենալ, ասիկա է ճշմարիտ ուսումը»:

«Ինչ որ բարի կամ չար է, ասիկա դեռ ոչ մէկը գիտէ. ասիկա թող ըլլայ ուրեմն ստեղծագործողը» (Այն ատեն Չառադուդսիւան խօսեցաւ):

Արդի մարդկութիւնը երջանիկ մարդկութիւն մը չէ: Ողի ու բոխն եւ աննշկատ գոյութեան պայքար մը, ընկերային ստութիւն ու ապականութիւն միշտ աւելի կը նուազեցնեն մեր մարդկային արժանաւորութիւնը եւ ասիկա՝ հակառակ ամէն ճանաչողութեան, հակառակ ամէն դիտութեան: Մտաւորական բարձր չափերը, որոնց համար ամէն պայքար ալ տեղի կ'ունենայ, չեն կրնար երկրորդական դարձնել մարմնական շահերը եւ անոթիներն ալ կշտացնել, չեն կրնար երջանկութիւն, գոհացում եւ կեանքի ներդաշնակութիւն տալ: Որքան միտք ու բանականութիւն, որքան կարողութիւն կը վատնուի այսօր, կեանքի անհրաժեշտ պէտքերը միայն հայթայթելու համար: Բոլորովին անմտած դաժնիկ չէ միայն որ յաճախ ցաւալի պայմաններու մէջ կ'ապրի Ամէնուն ծանօթ իրողութիւն մըն է թէ այսօր Եւրոպայի մէջ ընչազուրկներու դասակարգին ինչպէս մաս կը կազմեն մտաւորականները, դարգացածները, կարողութիւն ունեցողները հաւասարապէս: Գալով առանձին անհատին գոյութեան, անիկա նոյնքան մակերեւութային է որքան էր երբեմն Գոյութեան կոպիտ ու նախնական պայքարը եւ կը մնայ լուծումը

արդի ժամանակին ալ: Վաստկի՛ր, ահա՛ այս է ամէն կողմէ ելած ձայնը. ամէն բանէ առաջ ինքզինքը սնուցանել եւ չափազանց չի ցանկալ բարձրէն ըմբռնուած մարդու վիճակի մը մէջ ըլլալու, կատարեալ մարդ մը ներքին զեղեցիկ յատկութեանց եւ զգայութեանց ազատ խաղին մէջ, տէր՝ ինքնաձին տաղանդի, հակումներու եւ մտքի եւ հոգւոյ ոյժերուն:

Նիշէ որ հաւասարապէս կը հերքէ արդի ընկերութեան քաղաքակրթութիւնը, իր բոլոր կէտերուն մէջ, կ'երազէ բոլորովին նոր մարդ մը: Այս նոր մարդը, Գերբնաւ մարդը, օժտուած բոլոր սքանչելի առաւելութիւններով, մկանուտ, մեծ, վէս ու ինքնուրոյն բնաւորութեամբ, սահմանափակումներէ զերծ եւ կատարելապէս զերծ բնազդութիւն, չնորհիւ «իր յաւիտենական կամքին»:

«Կամք՝ ուժի համար» Նիշէի այս խօսքը որքան թիւր հասկցուած եւ որքան սխալ կերպով բացատրուած է. իր բոլոր քննադատներէն բուն կերպով պարսաւուած է այդ խօսքին համար. մինչդեռ իրականութեան մէջ այս խօսքը ոչինչ ունի իր մէջ որ նոր ըլլայ:

Նիշէ «Ուժի համար կամքը» իբր կամքի սկզբունք, իբր յաւիտենական, տիեզերական օրէնք մը ընդունելով, ատկից կը հետեւնէ նաեւ բնական իրաւունք մը, սերտ կերպով կապուած «Ուժի համար կամք»ին, այսինքն այն իրաւունքը, զոր առանձին անհատն ալ ունի իր բնազդներու ազատ զարգացմանը ինչպէս նաեւ ստիպանքներու տիրականութեանը մասին:

Իրաւունքը այս կերպով ըմբռնուած, իրաւունքի իմաստասէրներու մեծ մասին կողմէ ընդունուած է իբր աւելի զօրաւորին իրաւունքը: Գալով Նիշէի տեսութեան, իմաստին «Կամք ոյժի համար» սկզբունքին, կը նոյնանայ իրաւունքը իբր ոյժ վարդապետութեան հետ:

Իրաւունքի մասին չահեկան ուսումնասիրութեան մը մէջ ճաբոնցի գիտնական մը («Der Kampf ums Rechdes Stärken und seine Entwicklung.» von Hiroyuki Kato) Բազօ, ամենէն առաջնակարգ ու նշանաւոր իրաւունքի իմաստասէրներու վրայ հիմնուելով կ'ըսէ.

«Միայն ոյժի պայքարն է իմ կարծիքովս, որ ամենէն աւելի ընդհանուր եւ նախատիրոջն է. գրեթէ ոչ մէկ ժողովուրդ ոչ մէկ զստակարգ, ոչ մէկ ընկերակցութիւն, ոչ մէկ կուսակցութիւն եւ ոչ մէկ ընտանիք կը ճանչնանք, ուր ոյժի պայքարը ամէն օր եւ ամէն ժամ, պիտակցօրէն կամ անգիտակցաբար տեղի չունենայ...: Ոյժի պայքարին մէջ աւելի զօրաւորին իրաւունքը միշտ յաղթող պիտի ըլլայ:»

Այս մասին Սթինոգայի այնքան ծանօթ խօսքն ալ հարկ է յիշել թէ.

«Բնական ամէն իր, բնութենէն այնքան իրաւունք ունի, որքան տէր է ոյժի,

դաժնուելու եւ ներգործելու համար... Մեծ ձուկ մը կ'ուտէ պզտիկը եւ անասուն մը՝ ուրիշը, բնութեան իրաւունքին համաձայն. եւ այսպէս ամէն մարդ բնութենէն նոյնքան իրաւունք ստացած է իր ցանկութեանց ոյժին եւ իր բանականութեան օրէնքներուն համեմատ ապրելու: Տկարը որ ցաւով ու խարէութեամբ կ'ուզէ իր գոյութիւնը պահել կը փորձէ, այնքան իր բնական իրաւունքին մէջ է որքան զօրաւորը, որ ոյժ ի գործ կը դնէ, ուրիշները իրեն ծառայել տալու համար:»

Իրաւունքի ամէնէն նշանաւոր իմաստասէրներն ալ, «Իրաւունքը իբրեւ ոյժ» սկզբունքը կ'ընդունին իբր բնական օրէնք եւ նախնական իրաւունք. Պլուտարքոս ալ արդէն ըսած է.

Ամէնէն հին օրէնքը որ Աստուծոյ սկսելով մինչեւ անասունները կը հասնի աւելի զօրաւորներուն կուտայ իշխանութիւն մը՝ տկարագոյնին ինչքերուն վրայ:

Նիշէի իմաստասիրութիւնն ալ, որ «Կամք ոյժի համար» սկզբունքով կը սկսի, կը յանգի «աւելի զօրաւորին իրաւունքը» սկզբունքին, եւ կը նոյնանայ անոր հետ: Ըստ Նիշէի, զօրաւորները եւ մեծերը պէտք է յաղթահարեն տկարները եւ ստորինները, զլեն անցնին զանոնք, զատուին անոնցմէ. զօրաւորները, իրենց ոյժին բացարձակ զգացողութեանը մէջ, հարկ է որ տիրական դառնան իրենց ամէնէն հիմնական բնազդներովը: Ըստ Նիշէի, այս նախապատմական հիմնական բնազդները միշտ ու միայն նախապատմական կոչուած թիւններն են, այլ նաեւ նախապատմական իրաւունքներ, ի մասին կեանքի վայելքին:

Արդի մարդկութեան քաղաքակրթութիւնը կ'ընթանայ «ոյժի համար մտաւորական կամքով», ձգտումով մը բնութեան վրայ տիրելու, անոր հրամայել կարենալու համար: Նիշէի՝ ոյժի աղնուապետականութեան այս իմաստասիրութիւնը կարելի է պատշաճեցնել նաեւ Տարվինսկանութեան հետ: Ինչպէս չէ՞ք զերման գիտնականը, որ Տարվինսկանութեան պետն է ներկայիս, առթիւ մը խօսելով հանրապետականութեան վրայ լուծելու համար. «Տարվինսկանութիւնը — քննարկականութեան վարդապետութիւնը (théorie de sélection) — աննախապաշար քննադատութեան մը լոյսին մէջ կ'երեւայ իբր աղնուապետական սկզբունք մը. այդ սկզբունքը «լաւագոյնը ընտրել, հանելն է»: Լաւագոյնը քննարկ հանելը փափաքն է նաեւ Նիշէի եւ Տարվինսկանութիւնը աւելի «Կամք ոյժի համար» վարդապետութեան կողմն է քան թէ հակառակ անոր:

Բրոֆ. Շդայն, Նիշէի անհաշտ հակառակորդ քննադատը, կը յարձակի Նիշէի այս վարդապետութեան վրայ, իրեն պատուար ունենալով զարգացման օրէնքը եւ կը յայտարարէ թէ ամէն ինչ հղած է,

ինչպէս պէտք էր որ ըլլար: Ասիկա սակայն շատ կրաւորական ըմբռնումն է մարդկային կարողութիւններու կիրարկումին եւ միեւնոյն ատեն խոստովանութիւն մը՝ պատահարներու անյեղիւթեան: Մտածելու կերպ մը, որ բնական է հետուէ ճիշդը ըլլալէ, այն պարզ պատճառով որ բնութեան մէջ ամէն բան անյեղիւ չէ: Բրոֆ. Շդայն, Նիշէի իմաստասիրութիւնը ժամանակիս մտաւորական աշխարհիս մեծագոյն վտանգներէն մին կը դաւանի եւ անոր դէմ ամէնէն բուն պայքարը կը մղէ. ինչո՞ւ սակայն այդ պայքարը, քանի որ Նիշէ ալ, ըստ Բրոֆ. Շդայնի վարդապետութեան, ընդհանուր իրողութեանց շարքին մէջ, իբր՝ արդէն գոյութիւն ունեցող բան մը, իր յատուկ տեղը գրաւէ:

Նիշէ կը խօսի արդի մարդոց վրայ իբր սոնք պտուղն ու հետեւութիւնը, բազումս յիշուած պատմականօրէն տեղի ունեցած զարգացումի մը եւ հետեւեալ դառն դիտողութիւնները կ'ընէ.

«Ճշմարտապէս ջլատող ու տխուր է այն հաւատքը թէ մենք անցնող ժամանակներուն վերջին մնացորդն ենք. սոսկայի ու խաթարիչ պէտք է թուի սակայն, եթէ այս հաւատքը օր մը նախապէս պատահած ամէն բաներու իբր ճշմարիտ իմաստն ու նպատակը՝ աստուածացնէ այս վերջին մնացորդը եւ եթէ այս վերջնոյն գիտակից թշուառութիւնը նկատուի իբր կատարում մը տիեզերական պատմութեան: Նկատելու այս օրինակ կերպ մը, գերման մտքերը վարժեցուցած է «տիեզերական իրաց» մասին խօսելու եւ իրենց ժամանակն ալ իբր անհրաժեշտ հետեւանքը այդ տիեզերական իրաց բանաւոր հոչակելու:»

Զարգացումը չարժուա է եւ սակայն ո'չ չարժուա մը միշտ գէպի առաջ. «Ամէն պարագայի մէջ շրջանը աւելի հաւանական կրնայ ըլլալ քան գաղարը:» Այս խօսքը Նիշէի կը վերադրէ Լու Անտրէաս Սալոմէ, Վիլհելմսի կին գրագէտը, որ Նիշէի մասին կարեւոր հեղինակութիւն մը ունի, ներկայացնելով գերման իմաստասէրին մտքի կեանքին եւ զարգացման պարագաները, իրենց ամբողջութեանը մէջ եւ այդ առթիւ բացատրելով Նիշէի վարդապետութիւնը ի մասին յաւիտենական շրջանառութեան եւ ամէն իրաց վերադարձին:

Նիշէ չի դրժեր զարգացման օրէնքները. խնդիր է միայն այն ուղղութիւնը եւ այն արդիւնքը, որոնք զարգացումը կը փութացնեն:

Բացարձակ ճշմարտութիւն մը չէ այն խօսքը թէ «զարգացումը կատարելապէս եւ ամէն բանի մէջ մեր ձեռքերը կը կապէ: Այն վայրկեանին ուր մենք ճշգրտօրէն վերահասու կ'ըլլանք զարգացման օրէնքներուն եւ միեւնոյն ատեն կըրոնք նաեւ ազդել անոնց վրայ, կարողն

ենք արդէն ըստ բնութեան եղած զարգացման նոր բաժիններ ու անցքեր ցոյց տալ նախապէս Մինչեւ անտիճան մի մարդիկ ի վիճակի են կատարման մէջ եղող բաներու վրայ հսկելու եւ անոնց ձեւը իրենք տալու: Այս բանին համար սակայն դատարարական օրէնքները պէտք է փոխեն մարդիկ, տղան պէտք է անուցանել նոր մեթոտներով, ասոնց մէջ զայն վարժեցնել, սեռերու միասորման մասին նոր կանոններ պէտք է հաստատել, վեր առնել մեծ քաղաքները ի նպաստ տափարակ գիւղական տարածութեանց, թոյլ չտալով որ քաղաքի մը բնակչութիւնը ճշգրտած թիւէ մը աւելի ըլլայ, ծրագրուած եղանակով մը մարդոց պէտք է ցոյց տրուի բնակարան, աշխատութիւն, անունը, վայելքներ, զօրաւոր կերպով պէտք է հակադրել ճարտարարուեստից վրայ ի նպաստ դիւղատնտեսութեան, ինչքերու բաժանման հիմնաւոր կերպ մը պէտք է ընդունիլ, մէկ խօսքով արմատական կերպով պէտք է փոխել կեանքին պայմանները ու ձեւերը: Կէտք է նաեւ թոյլ տալ որ ժողովուրդները եւ ցեղերը, մեծ անդորրութեան մը մէջ իրարու խառնուին ու իրարու միանան. այս կերպով, ատենէ մը վերջ մարդկութիւնը նոր դէմք մը ցոյց պիտի տար: Մենք կարող ենք միջամուխ ըլլալ զարգացման օրէնքներու եւ գէթ մասամբ գծել անոնց ուղղութիւնը:»

Ահա ասոնք են Նիչէի իմաստասիրութեան ձգտումները, որոնցմով կ'ուզէ արդի մարդոցմէն սերել տալ գերբնամարդիկը: Գերբնամարդիկը ըստ Նիչէի ուրիշ բան չեն բայց եթէ անհատներ որոնք աւելի մեծ աւելի ուժով, աւելի երջանիկ եւ աւելի իմաստուն են, քան թէ այսօրուան մարդիկը:

«Մարդուն մէջ արարած եւ արարիչ միացած են: Մարդուն մէջ են նիւթ, բեկոր, աւելորդ մաս, կեանք, տիգր, առիւմաստութիւն, քառոս: Բայց մարդուն մէջ են նաեւ արարիչ, կազմող, մուրճի կտրծութիւն, հանդիսատես-աստուածութիւն եւ եօթներորդ օր» կ'ըսէ Նիչէ Բարիէն ու Ջարէն Անդին երկասիրութեանը մէջ:

Մ. ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

(Վերջին Յօդուածը՝ յաջորդով)

ԻՇԳ ԿԵՆՔ ԵՐԵՎԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ (*)

§ 82.—Փոխանակագիր մը ներկայացուելէն մինչեւ 24 ժամ կամ պիտի ընդունուի եւ կամ պիտի մերժուի. հակառակ պարագային՝ վար զնոյ անձին վրայ կը մնայ. բայց եթէ վճարօրը օրէնքէն

(*) Տե՛ս Ծաղիկ, թիւ 17.

ընդունուած կիրակի եւ տօն օրուան մը հանդիպի, օր մը առաջ վճարուելու է:

§ 83.—Եթէ անվճար մնայ փոխանակագիր մը, պայմանաժամուն յաջորդ օրը պէտք է բողոքագիր (փրօթէսթօ) տալ դատարանին:

§ 84.—Փոխանակագիր մը կրնայ ուրիշին անուան փոխանցուիլ. այս պարս. դային՝ փոխանակագիրը ստորագրող եւ ընդունողն ու փոխանցումին հաւանողը մէկ մէկու երաշխաւոր եղած կը նկատուին. որով եթէ անվճար մնայ փոխանակագիրը՝ արժէքը կը պահանջուի թէ զըրկողէն եւ թէ փոխանցումը գործադրողէն:

§ 85.—Որ եւ է խնդրոյ առթիւ երբ երկու անձի միջեւ իրաւախնդութիւն (սուլէ) կը գոյանայ, ալ եւս առանց փոխադարձ հաճութեան՝ չկրնար իրենցմէ մէկը խօսքը ետ առնել. այսպէս՝ պահանջատէր մը կարող չէ անգամ մը նուիրած առնելիքը կրկին պահանջել:

§ 86.—Դատունցող անձերու միջեւ միայն մէկ կէտի վրայ կատարուած համաձայնութիւնը կ'ըսուի մասնակի անպարտութիւն (իպրայի խաս). իսկ ամբողջութեան վրայ գոյացածը՝ ընդհանուր անպարտութիւն (իպրայի ամմ):

§ 87.—Պարտական մը՝ որուն ձեռագիրը կամ կնիքը (խաղդ վէ խաթէմ) հանրածանօթ չէ, երբ ուրանայ իր մուրհակը, գիր գրել կը տրուի (իսթիքթաս) իրեն եւ մուրհակին ստորագրութեան հետ բաղդատելու համար կը յանձնուի տեղեակ քննիչներու (էհլի խըպրէ), որոնք եթէ հաստատեն նոյնութիւնը, պարտականը կը հարկադրուի վճարել նոյն պարտքը:

§ 88.—Խնդրոյ մը առթիւ երբ հարկ է խօսիլ, լուռ մնալը խոստովանութիւն կը նշանակէ:

§ 89.—Խօսելու կարող (նաղըզ) մէկու մը՝ նշաններով (իշարէթ) ըրած խոստովանութիւնը ընդունելի չէ. այս պարագային տակ, երբ մէկուն կը հարցուի թէ՛ այսինչին այսչափ զրուշ պարտակա՞ն ես, անոր՝ գլուխ ծռելը խոստովանութիւն (իգրար) չի նկատուիր:

§ 90.—Պայմանագրական խոստում մը երբ որոշ ժամանակի հանգամանք չունի, վաւերական չէ. «եթէ այսինչ տեղը երթամ կամ այսինչ գործին ձեռնարկեմ, քեզի այսքան զրուշ վճարելու պարտաւոր եմ» ըսելով, խոստացուած գումարը վճարելու չի հարկադրուիր մէկը, ալ պէտք է որ վճարօրը ճշգրտած ըլլայ:

§ 91.—Կալուածային փոխանցումներու (ինթիզալ) համար պէտք է վճարել 30 առ 1000 միահաղոյն տուրք (իճարէի մուաճճէլէ) եւ տարին քառասուն փարա պայմանաժամաւ տուրք (իճարէի մուէճճէլէ):

§ 92.—Երբ մարդ մը մեռնի անգաւակ (պիլա վէլէտ) բայց ունենայ յղի կին մը

սա պէտք է իր յղութիւնը՝ ամուսնոյն մահէն անմիջապէս վերջը իմացնէ կառավարութեան, որպէս զի ետքէն ծնած զաւակը չզրկուի հօրենական ժառանգութենէն (մահլուլ):

§ 93.—Ննջեցեալի մը ժառանգորդներէն ոմանք եթէ ուզեն իրենց բաժինը զատել եւ ոմանք չուզեն՝ դատաւորը ա՛յն ատեն կրնայ բաժնութեամբ կատարել բաժանումը՝ երբ անկէ որ եւ է վիսա մը չի կրնար բաժնուելիք ստացուածքը:

§ 94.—Ննջեցեալի մը պահանջները գանձուելէ առաջ, եթէ ժառանգորդները բաժնեն զայն իրենց մէջ, վաւերական չըլլար եղած բաժանումը եւ մէկուն գանձածին միւսն ալ կրնայ տիրանալ:

§ 95.—Կալուածի մը բաժնետէրերը երբ չեն կրնար զայն հաւաքաբար գործածել, պարտաւոր են անկէ սգտուիլ կարգաւ (մուհանաթ). այսինքն տարի մը մէկը եւ տարի մը միւսը կը գործածէ կամ կը վայելէ իր բաժինն ու իրաւունքը:

§ 96.—Բաժնետէր մը իր բաժինը բաժնեկիցէն զատ՝ ուրիշի մը չկրնար ծախել կամ վարձու տալ՝ առանց ստանալու անոր հաւանութիւնը:

§ 97.—Վարձակալ մը չկրնար իր վարձած չէնքը գործածել պայմանին չհամապատասխանող նպատակներու. այսինքն, թէ կրնայ քնակութեան համար վարձած սենեակը յատկացնել կահ կարասեաց ու հոն չընակիլ, բայց չի կրնար յատկացնել խանութ մը երկաթագործութեան՝ երբ զայն վարձեր է ապրանք դնելու եւ աւելտուրի համար:

§ 98.—Վարձուած տեղւոյ մը նորոգութեան եւ ուրիշ անհրաժեշտ ծախքերը վարձատուին կը վերաբերին, իսկ զարդի կամ հաճոյքի համար եղածները՝ վարձակալին:

§ 99.—Գործի մը համար երբ ժամանակ պայմանուած է, կը բաւէ որ գործողը աշխատելու կամ ստանձնած պարտականութիւնը կատարելու պարտաստ գտնուի, իրաւունք կ'ունենայ ստանալու որոշուած վարձքը՝ թէ եւ գործադրուած չըլլայ պայմանը:

§ 100.—Ի նպաստ կրթական եւ բարեգործական հաստատութեանց, Օրէնքը կը թոյլատրէ որ վիճակահանութիւն կատարուի. բայց նախապէս հարկ է գիմել կառավարութեան եւ արտօնութիւն ստանալ:

(Շար.)

Մ. Վ.

«Ծաղիկ»ի նախորդ թիւով հրատարակուած Ինկած Հոգիներ յօդուածին մէջ, Բ. սիւնակ, «գալուցութիւն»ը պէտք է կարգաւ «երրորդութիւն»:

Գեորգ Գաբումանեան չզիմեցաւ և
սիրար արիւնոտամ մեկնեցաւ Բարիլէն •
քանի մը սաիս առաջ Պոլիս տեսայ ղին-
քը • միշտ նոյն երեւոյթին էր, աժդոյն,
աչքերը հիւանդոտ, միշտ նոյն հալարու-

Նոր Գրքեր

ՕՏԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՔ

Մտքի նյութը, կամ Բժշկությունը
մեջ մտքի նյութը, գրեց Տոֆ. Շո-
ֆիլդս:—Ինչպե՞ս կարելի է ստանալ
և գործունե կամի նյութը, գրեց Տոֆ.
Էպստեյն:—Քննադատությունը և Բժշկու-
նությունը, գրեց Ռիչարդ Հարդ:

Սուտ խոսքեր անարգարություն է. ա-
հալապիկ հարցում մը որ անվերջանալի
խորհրդածություններն ծնունդ տուած է թէ՛
կրօնական եւ թէ՛ աշխարհական այն ա-
մէն անձերուն համար, որոնք խղճի խըն-
դիրներուն մէջ հեղինակութիւն մը ունին:
Բայց ատոր յարակից ուրիշ պարագայ մը
կայ, որուն վրայ գրեթէ բնաւ չէ վիճա-
բանուած: Շատեր խօսած են թէ՛ ո՛րքան
մեծ մեղք մըն է ինքզինքին կամ զրա-
ցիին սուտ մը չինելը, բայց ո՛վ խորհած է
նկատողութեան առնել սա կէտը թէ՛ ա-
նիւրաբարութիւն է անգիտակից եսին սուտ
խօսքը եթէ տարրալուծենք թելադրու-
թիւն (suggestion) կոչուած գիտութիւնը,
պիտի տեսնենք որ անոր գլխաւոր տարրը
կը կազմէ ստախոսութիւնը, զոր պէտք է
ընել անգիտակից էսին: Երբ հիւանդ ըլ-
լաք, կորովի կերպով մը ինքզինքնուր-
ուտ ըսէք թէ քաջառողջ էք, եւ ահա՛,
ձեր անգիտակից ետ պարզամտօրէն պիտի
հաւատայ ձեր խօսքին, որով բուժուած
պիտի ըլլաք արդէն: Եթէ չէք կրնար
հաւատ ընծայել այս խօսքին, կարողացէք
ուրեմն վերողորեալ երեք գիրքերը եւ լըր-
ջօրէն հարցուցէք ինքնիրեն թէ մե՞ղք
է ինքզինքը բուժել ստախոսութեամբ,
քանի որ, թելադրութեան ոյժին հաւա-
տացողները կը պնդեն թէ վիժխարի սուտ
մը յաճախ ամէնէն ազդեցիկ գեղն է:

Այս երեք գիրքերուն գրեթէ միաժա-
մանակ հրատարակութիւնը ներկայիս տի-
րող կարծիքներուն մէկ արդիւնքը պէտք
է համարել, անոնք շատ լաւ ցոյց կուտան
թէ ամէն բժիշկ իր մտաւորական պա-
շարը անբաւական պէտք է համարէ, եթէ
խորապէս չէ ուսումնասիրած հոգեբանու-
թիւնը եւ այն ազդեցութիւնը զոր միտքը
ունի մարմինին վրայ: Այսուհանդերձ պէտք
է ըսել թէ Տոֆ. Շոֆիլդ ազդուօրէն կը
մերժէ կարեւորութիւն տալ բոլոր այն
հինէն նորէն ոչ—գիտական գրութեամբ
դարմանողներուն, վնասներուն եւն: Մըտ-
քին ոյժը անուն 309 էջէ բաղկացած ըն-
դարձակ գործը գրելով իր նպատակը եւ
զած է բժշկական աշխարհը հետաքրքրել,
որպէս զի լրջօրէն ուսումնասիրուի այն
խնդիրը թէ կարելի՞ է աւելի արդիւնաւոր
կերպով բուժել հիւանդութիւնները, հի-

ւանդին մտքին վրայ ազդելով քան անոր
մարմինին: «Ըսել չեմ ուզեր թէ բժիշկ-
ները պէտք է ամբողջովին մոռնան միւ-
շեւ հիմա իրենց դիտածը. ըսել չեմ ու-
զեր թէ իրենց բոլոր դասագիրքերը պէտք
է ոչնչացնել. այլ սա՛ թէ՛ բժիշկները թող
ամէն ատեն աչքի առջեւ ունենան այս
կենսական հարցը. միտքը ի՞նչ տեսակ դեր
մը ունի հիւանդութիւններ պատճառելու
գործին մէջ եւ թէ ինչպէս կարելի է ա-
նոր միջոցով բուժումներ գործել:» Ա-
սիկա այնպիսի նիւթ մըն է զոր պէտք է
ուսուցանել բոլոր բժշկական վարժա-
րաններուն մէջ, կ'ըսէ անգլիացի գիտնա-
կանը:

Տոֆ. Էպստեյնի կամքի Ոյժը ասոր
գիրք մըն է թէպէտ, բայց Տոֆ. Շոֆիլդի
գիրքէն վերջ կարգացուելով մեծ օգտա-
կարութիւն մը կրնայ ունենալ:

Երրորդ հրատարակութիւնը յայտնա-
պէս դէմ կը խօսի բժշկական արուեստին:
Հեղինակը՝ Մր. Հարդ «Մեամերականու-
թեան վերակենդանացումը» անուն հատ-
ուածին մէջ կը բացատրէ թէ ինչո՞ւ բր-
ժիշկները կորսնցուցած են հանրութեան
վստահութիւնը. ներկայացուած տաճն եւ
մէկ պատճառներէն կը տեսնենք թէ, բո-
այս հեղինակին, այսօրուան բժիշկ դասա-
կարգը առեւտրական միութիւն մը եւ
զրքոյ մըն է պարզապէս: Կը թելադրէ
որ բժիշկի մը վկայականը տաճնաւոր ա-
մէն տարի վերանորոգուի. նախորդ տար-
ուան մէջ բժիշկին արտադրած գործին
համաձայն: Մր. Հարդ կը դանդաղոր
բժիշկները շատ մը վնասակար սովորու-
թիւններ մտցուցած են ժողովուրդին մէջ.
ասոնցմէ գլխաւորաբար կը յիշէ մորֆինի
ենթամարմային ներարկումը:

Վերագառնալով Տոֆ. Շոֆիլդի դոր-
ծին, անոր մէջ կը տեսնենք ամէնէն ապ-
շեցուցիչ յայտնութիւնները, բժշկական ար-
ուեստին մասին: Տարիներ առաջ անդ-
լիացի նշանաւոր բժիշկ մը վախ կը յայտ-
նէ եղեր թէ սուտ բժիշկները ասորձանա-
բար աւելի մեծ համակրութիւն մը պիտի
չահին ժողովուրդին մէջ, քանի որ ասոնք
կը յաջողին իրենց ծանօթ միջոցներով
դարմանումներ ընել: Այսօր Տոֆ. Շո-
ֆիլդ կը ծաղրէ բժշկական այդ բարձր
հեղինակութիւնը, որ ձեռնպահ՝ կը սպա-
սէ բուժականներուն (սուտ բժիշկ) տանելիք
յաղթութեան: Երբ բժիշկները չեն ուզեր
հոգեբանութիւնը ուսումնասիրել բժշկա-
կան տեսակէտով, ընդարձակ ասպարէզ
մը բաց թողած կ'ըլլան բոլոր այն բու-
ժականներուն առջեւ, որոնք մասնաւորա-
բար Ամերիկայի մէջ կը մրցին վկայեալ
բժիշկներու հետ: Բուժականներուն կատա-
րած յաջող դարմանումները պէտք է վե-
րադրել սա իրողութեան թէ անոնք ար-
դէն գործադրութեան գնել սխառ են այն՝
զոր տակաւին նորնկատի կ'առնեն բժիշկ-
ները—այսինքն սա ճշմարտութիւնը թէ

հիւանդութիւն մը դարմանելու ամէնէն
կարճ, պարզ եւ ազդու միջոցն է հիւան-
դին միտքին վրայ կատարուած ազդեցու-
թիւնը: Միտքը ըսելով Տոֆ. Շոֆիլդ կը
հասկնայ այն բոլոր հոգեկան գործողու-
թիւնները, որոնք մարդուն մէջ կը կա-
տարուին: Անգիտակից միտքը մարդուն
մարմինն մեծագոյն մասին վրայ ունի իր
ազդեցութիւնը:

Տոֆ. Շոֆիլդի կարծիքով առնուազն
չորս միջոցներ կան, որոնցմով կարելի է
գործածել միտքը, հիւանդ մարմինն բուժ-
ման համար. առաջին՝ անգիտակից միտքը
իր մէջ գոյութիւն ունեցող թաքուն ոյժը
կը գործածէ. երկրորդ՝ անգիտակից միտքը
կրնայ ազդուիլ ուղղակի չըջակայ անձե-
րէն կամ անգիտակից ազդակներէ, որոնք
կը գործեն իբր իրական թելադրու-
թիւններ. երրորդ՝ անգիտակից միտքը
կրնայ ազդուիլ անուղղակի կերպով, դի-
տակից միտքէն, որ հաւատ կ'ընծայէ ան-
ձերու, դրութիւններու, տեղերու, եւ այլն.
չորրորդ՝ անգիտակից միտքը կրնայ անուղ-
ղակի ազդուիլ, որոշուպէս կամենալով ա-
ռողջանալ, հիւանդութիւնը իրմէն հեռաց-
նել, ցաւին գոյութիւնը անգիտանալ
եւ այլն:

Թելադրութեան ազդեցութիւնը, կ'ըսէ
Շոֆիլդ, բորակածնի ազդեցութեան կը
նմանի. բորակածնը միջնորդութիւն տարրե-
րուն չորս հինգերորդ մասը կը կազմէ,
բայց դարձեալ չենք կրնար զուտ վիճակի
մէջ շնչել զայն: Բորակածնը այն ատեն
միայն կրնանք մեր մարմինէն ներս ըն-
դունիլ, երբ ուրիշ նիւթերու հետ խառ-
նուած է ան. այսպէս ալ սովորաբար կա-
րելի չէ միտքին վրայ ազդել, երբ ուղեղը
հիւանդ է, առարկայական միջոցներով
պէտք է թելադրութիւններ ընել:

Մտքին Ոյժը հատուիւն ամէնէն աւելի
հետաքրքրական մասերէն մէկն է այն, որ
անգլիացի գիտնականը կը խօսի իր կա-
տարած փորձերուն վրայ եւ ցոյց կուտայ
թէ թելադրութիւնը ի՞նչ արդիւնքներ յա-
ռա՞ւ կը բերէ յամառ եւ երկարատեւ հի-
ւանդութեանց բուժման միջոցին: Ի վեր-
ջոյ կ'եզրակացնէ թէ ամէն հիւանդի հա-
մար թելադրութիւնը պէտք է այնքան
պարտաւորիչ ընել, որքան է պատուաստը:

Տոֆ. Շոֆիլդի մասին՝ այսչափ: Դառ-
նալով Մր. Էպստեյնի հեղինակութեան,
այլապէս չահագորդիւ կը գտնենք զայն:
Հեղինակին գլխաւոր նպատակն եղած է
բացատրել (նախ Ռայթըն) Տոֆ. Է. Է. Վիլի
տեսութիւնները, այս գիտնականը իր փոր-
ձերով հաստատած է թէ որքա՛ն անհուն
օգտակարութիւններ ունի անձնաթելադ-
րութիւնը, առողջութեան պահպանման
համար: Այն անօթի մարդը, որ իր անօ-
թութենէն կը փորձուի կտոր մը հաց գող-
նալ, վախէն կը զսպէ այդ մղումը: Այն
պարագային ուր անօթութիւնը եւ վախը
հաւասար դրութեամբ կը գործեն, անօթի

մարդուն միտքը պիտի գրաւուի կամ' ներքին ցաւերէն եւ կամ թէ ոտիկանին երեւումին պատճառելիք թելադրութենէն: Երբ մարդ մը երկու կործիններու ճիշդ մէջտեղը կանգ առած կը խորհի, միակ բառ մը երբեմն բաւական կ'ըլլայ որ ա՛յս կամ այն կողմ յարի. այսինքն թէ, լսողական պարզ գրգռում մը կրնայ ազդել հոգեկան կեանքի միջուկին վրայ եւ անօթութիւնը կամ վախը տիրող տարրը դարձնել ենթակային մտքին մէջ, այդ ժամանակին համար:

Տօքդ. Էպպրտի համոզումով, թելադրութիւնը պարզապէս այն գործողութիւնն է, որով տիրող տարրեր կը ստեղծենք մեր գործերուն ուղղութեան համար: Այս թելադրութիւնը զուտ մեքենական կերպով մը կը գործէ, որոշ օրէնքներու համաձայն, եւ որոնց չնորհիւ անոր գործունէութիւնը ապահով եւ անսխալական կ'ըլլայ: Գալով այն խնդրին թէ ինչպէս կրնանք մեր միտքին տալ տիրող տարրերը՝ մարմինին վրայ իշխելու համար, Տօքդ. Լէվի թելադրութեան չորս աստիճաններ կը կշանակէ. առաջին՝ լոռութեան աստիճան, որուն մէջ հանդարտութեամբ մարդ որ եւ է պէտք է ինքզինքին թելադրէ գաղափար, որուն մեր միտքին մէջ տիրող տարրը լայն կը փափաքինք: Երկրորդ աստիճանին մէջ թելադրութիւնը պէտք է դորացնել զգացողութիւններով, ասիկա կարելի է ձեռք բերել, երեւակայելով թէ ուզուածը իրականացած է արդէն: Երրորդ աստիճանին մէջ պէտք է թելադրութիւնը դարձեալ զօրացնել, իրապէս կատարելով այնպիսի գործեր եւ շարժումներ, զոր արդէն պիտի ընէինք եթէ երեւակայուած գաղափարը իրականացած ըլլար: Չորրորդը կանխաթելադրութիւն կոչուած գործողութիւնն է:

Եւ հիմա կը հաննինք ամէնէն դրական հարցումին. ինչպէ՞ս պէտք է բուժենք ինքզինքնիս: Ենթադրենք որ կ'ուզէք մասնաւոր հիւանդութենէ մը բուժուիլ, զոր օրինակ, անքնութենէ կամ քնամոլութենէ, գլուխի ցաւէ, սրտի բարակութէ, վերջապէս ու եւ հիւանդութենէ որ յառաջ կուգայ ջղային դրութեան խանգարումէն: Ահաւասիկ թէ ինչ են բժշկական նորագոյն պատուէրները: Գիշերը, քնանալէ առաջ հանգիստ մը պառկեցէք, ձեր ուշադրութիւնը բոլորովին չէզոքացուցէք ձեր շուրջը գտնուող իրերէն կամ անձերէն, եւ թող ձեր միտքը կեդրոնանայ սա գաղափարին վրայ թէ առտուն արթնցած ատենիդ ամբողջովին առողջացած պիտի ըլլաք. այս այսպէս պէտք է ընել, հիւանդութիւնը ինչ որ ալ ըլլայ: Հիւանդը պէտք է միտքէն ըսէ նախ. «Վաղն առտու պիտի արթննամ եւ հիւանդութիւնս անցած պիտի ըլլայ»: Մէկ երկու վայրկեան յետոյ, ինքնիրեն եւ կամաց ձայնով չորս անգամ թող

կրկնէ. «Վաղը երբ արթննամ, կատարեւապէս առողջացած պիտի ըլլամ. արթնցած ատենս հիւանդութիւնը գացած պիտի ըլլայ»: Յետոյ երկու անգամ պէտք է կրկնէ բարձրաձայն. «Վաղը քաջաոգջ պիտի ըլլամ. երբ արթննամ ցաւերս անցած պիտի ըլլան»:

Առտուն, արթննալէ ետք, երբ կը տեսնէ որ ցաւերը անցած չեն դեռ, անմիջապէս ինքնիրեն թող ըսէ. «Այս առտու հիւանդ չեմ. երէկ գիշերուան կատարած թելադրութեամբս բոլոր ցաւերս անցան»: Յետոյ վեց անգամ դաժ ձայնով եւ ինքնիրեն թող կրկնէ. «Այսօր ցաւ չունիմ»: չորս անգամ ալ միեւնոյն խօսքը պէտք է կրկնէ կէս բարձրաձայն: Յետոյ երկու անգամ շատ յստակ կերպով եւ բարձրաձայն պէտք է ըսէ. «Այսօր հիւանդ չեմ»:

Թելադրութիւնը զօրացնելու նպատակով ենթական պէտք է երեւակայէ թէ որքան հաճոյալի էր բնաւ հիւանդ չըլլալը, եւ պէտք է խորհի բոլոր այն զուարճալի ժամանակներուն վրայ, զոր պիտի ունենայ, հիմա որ հիւանդ չէ այլեւս: Եթէ այս փորձերը չբաւեն, թող իր քովը կանչէ բարեկամ մը, որ հաստատականութեամբ եւ ուժգնօրէն յայտարարէ թէ հիւանդ չէ այլեւս: Եթէ այս ալ չյաջողի, հիւանդը դարձեալ ինքնիրեն թող կրկնէ ծանօթ բանաձեւը, մերթ բարձրագոյն, մերթ մեղմաձայն: Ոչ մէկ պարագայի տակ հիւանդը պէտք է ինքզինքը լքէ եւ իր ցաւին վրայ խորհի. ինչհակառակը, ինքնաթելադրութեան փորձերը գաղտնիութեան պէս թող ու եւ գործով մը զբաղեցնէ ինքզինքը, թող զիր գրէ կամ խօսակցի, կամ թղթախաղի մասնակցի. ուրիշ խօսքով, իր անդիտակից մտքին թելադրէ վերջ թէ այլեւս քաջաոգջ է, պէտք է որ այնուհետեւ իր գիտակից միտքին վրայ ալ ազդեցութիւն բանեցնէ եւ իր մարմինը գործունէութեան մէջ դնէ, իրր թէ իրապէս առողջացած ըլլար ան: Ահա՛ այս սկզբունքին վրայ հիմնուելով, Մր. Քէրի (այս այն անձնաւորութիւնն է որ իր քարոզներով արդի միջինարական բնկերութիւնները հիմնեց Անգլիոյ մէջ) կը յայտարարէր թէ մենք պէտք է մեծ բաներ խնդրենք Աստուծմէ:

Բոլոր այն փորձերը, զոր մանրամասնեցինք քիչ մը վերը, Մր. Էպպրտ ինքն իր անձին վրայ կատարելով, անգամ մը յաջողեցաւ սարսափելի զլխու ցաւէ մը ազատիլ: Հիւանդութիւնը յառաջ եկած էր զօրաւոր սիկառ մը ծխելէն. գլխու ցաւը անտանելի էր եւ պէտք էր անմիջական դարմանում մը թելադրութեան միջոցով: Արդարեւ, տասնեւհինգ վայրկեանի մէջ Մր. Էպպրտ յաջողեց է ճողպրիլ զլխու ցաւէն, սա միակ պատճառով որ կրցեր է իր ուշադրութիւնը տուրջողովին կեդրոնացնել իր ուզած առողջական լաւագոյն վիճակին վրայ:

Խնդիրը շատ պարզ է ուրեմն. մէկ տեղերէնիդ կը ցաւի, ուրացէ՛ք այդ ցաւը եւ այլեւս ցաւ չպիտի զգաք: Բրիտոնէական գիտութեան կանոններն կոչուած վարդապետութեան հետեւողները միեւնոյն դաւանանքը կը պաշտպանեն, երբ կ'ըսեն թէ ամէն ցաւ պատրանք մըն է. պէտք է սուտ խօսիլ, որպէս զի բարիք յառաջ գայ, ինչպէս ի հարկին չարիք պէտք է դործել, որպէս զի բարիք յառաջ գայ, թող մեր խղճմանքը չխռովի այդ սուտին համար քանի որ ուրիշ մէկը չենք խտրել: Ս. Գրքի մէջ յիշուած կանխասացութիւնները միեւնոյն կերպով եղած են. հոն կը տեսնենք թէ անցեալ եղանակով խօսուած է այնպիսի գէպերու վրայ, որոնք իրապէս ապագային մէջ պիտի պատահէին. այսպէս ալ մեր այն հաստատական յայտարարութիւնները թէ այլեւս հիւանդ չենք, կարելի է նախասացութիւններ համարել:

Մր. Էպպրտ մեծ ազդուութեամբ կը պնդէ թէ բնաւ պէտք չէ ապահովել եղանակը գործածենք, այլ միշտ ներկան. երբէք մի՛ ըսէք. «պիտի ըլլամ» կամ «պիտի ընեմ» այլ միշտ՝ «եմ» կամ «կ'ընեմ»: Այս տեսակ խօսքեր եթէ ընենք մեքենաբար, ի վերջոյ պիտի կրննք այդ բանաձեւերուն տպաւորութիւնը. ըսենք որ արտաքին ժակ չունինք. այդ պարագային հարկ է կատարել նոյն այն շարժումները եւ ձուլները, զոր պիտի ընէր փառաւոր ճաշ մը ընող անձ մը. միայն թէ պէտք չէ աճապարել. թելադրութեան գաղափարը ժամանակի կը կարօտի արդիւնք մը յառաջ բերելու համար:

Առենք ուրիշ պարագայ մը. միտքերնիդ դրէք որ առտու մը այսինչ ժամուն արթննաք, ոչ աւելի կանուխ, ոչ աւելի ուշ: Ժամացոյցի մը պէս ճշգրտահունութեամբ պիտի արթննաք. եթէ կանխաթելադրութիւնը իր առաջին աստիճանին մէջ լաւ կատարուած է, անխիտիս կերպով արդիւնաւոր դեղ մը կ'ըլլայ անքնութեան դէմ: Թելադրութեան մէջ ալ պէտք է կանոնաւորութիւն դնել եւ օրը չորս անգամ—առտուն, կէս օրէն առաջ, կէս օրէ ետք, իրիկուն—թելադրութիւն ընել:

Կարելի չէ չհիմնալ այն խանգաւառութեան եւ խորունկ համոզման վրայ, որով Մր. Էպպրտ կը խօսի այս միգաւ կանոյթին նկատմամբ. «Մեր հոգեկան գոյութեան վրայ ինքնաթելադրութեան ազդեցութիւնը անսահման է եւ այս ոյժը այնքան աւելի կ'աճի, որքան շատնայ մեր վստահութիւնը եւ զօրանայ կամքին ոյժը: Ինքնաթելադրութեամբ՝ ես ոչ միայն կարող կ'ըլլամ զսպելու ֆիզիքական շատ մը պղտիկ ցաւեր, որոնք մարդկութեան մեծագոյն մասին կ'անքնը կը դառնացնեն, այլ եւ կը յաջողիմ իմ մէջէս վտարել նկարագրիս բոլոր անհեթեթ կողմերը, եւ

փոխարինական տրամադրութիւններս: Իմ վարմունքին գէշ կողմերը կը չարկեմ. ինքզինքնս եւ շրջակայիս միջեւ մաքուր եւ ազնիւ յարաբերութիւններ կը հաստատեմ, եւ ամէնէն տւելի, իմ մէջս բոլոր կը դնէ անդորրութիւնն ու ներգաշնակութիւնը, ինչպէս նաեւ երջանիկ զգացում մը թէ հոգեպէս եւ ֆիզիքսպէս առողջ եմ:»

Թելագրութեան դորձած մեծ ազդեցութեան ջատագովներուն այս խօսքերը այն ատեն աւելի խմանալի պիտի ըլլան անշուշտ, երբ անձնական փորձառութեամբ հաստատենք թէ, ակռայի ցաւ մը կամ յողատապ մը դոր օրինակ, կարելի է բուժել կամբի ոյժով, առանց պէտք ունենալու բժշկական դարմաններու: Թելագրութեան մէջ դորձածութիւնը գլխաւոր տարրը սուտ խօսքն է, վնասակար համարուած բան մը, ճիշդ ինչպէս որ ամէնէն օգտակար ազդեցութիւնը յառաջ բերող դեղերը թոյններ են յաճախ, վնասակար տարրեր այսինքն:

ԵՐԵՎԱՆ

ԲՈՊԸՐԴ ԳՈՒԷՃԻ
ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԳԻՍԸ

Չորեքշաբթի, կէս օրէ վերջ Բոպըդ Գոյէճի ընդարձակ օրհանգիստ մէջ կատարուեցաւ վկայական հաց բաշխման հանդէսը, նախագահութեամբ աւստրիական դեսպանին: Այս տարուան հանդէսին գլխաւոր նորութիւնը այն վերադարձն էր ինչ որ վերջին տարի մը, որուն համաձայն իւրաքանչիւր ազգութիւնէ մէջ մէկ շրջանաւարտ իր աւարտական ճառը կը խօսէր իր բնիկ լեզուով: Հայերէն ճառը խօսեցաւ Պ. Նշան Թորթաթլեան, բացատրելով պարզ մարդուն և իրական մարդուն տարբերութիւնը: Պ. Նիւլլէնիկ Նիւլլէնիկեան անգլէսէն լեզուով բացատրեց վաճառականութեան ազդեցութիւնը քաղաքակրթութեան վրայ, իսկ Պ. Տիգրան Գույումճեան ջանաց ապացուցանել թէ աշխարհ իր բնական վիճակին մէջ շատ լաւ է և թէ յուստաններն են որ գէշ կը ներկայացնեն զայն: Միւս Հայ շրջանաւարտներն են Պ. Պ. Լեւոն Տ. Մետրոպոլիտան, Մարտիկ Լ. Պայեղեան և Հրանդ Թ. Ներսիսեան: Ուրախակ է յիշել սա պաշտօնական թէ այս տարուան Հայ շրջանաւարտները մեծ մասամբ կը հետաքրքրուին տոհմային կեանքով և գրականութեամբ:

Տորթ. Ուշալընի կարճ մէկ ուղերձէն ետք կատարուեցաւ վկայական հաց բաշխումը, այսինքն «Արուեստից Պատկաւ» տիտղոսին շնորհով: Հանդէսը տեւեց մէկուկէս ժամ, որմէ ետք տեղի ունեցաւ «Թ. Գոյէճի շրջանաւարտից Ընկերութեան» տարեկան ժողովը: Ներկայ էին ու նոր վտօտանի չափ անդամները լսեցին նախորդ շրջանի տեղեկագիրը և կատարեցին նոր գիւտնի ընտրութիւնը:

Նիստէն անմիջապէս վերջ, նորակառոյց շէնքին օրհանգիստ մէջ տրուեցաւ 80 հոգինոց սեղան մը, նոյն ընկերութեան կողմէ. այս առթիւ Գոյէճի բազմաբնակ Տնօրէնին՝ Տորթ. Ուշալընի նուիրուեցաւ իր իւզաներէ մեծագիւտ պատկերը, որ օր մը պիտի կախուի Գոյէճի մեծ օրհանգի մէջ, Հէմլինի, Բոպըդի և Տորթ. Լոնիկ պատկերներուն քով: Հացկերոյթի միջոցին խօսուած բաժակաճառերը, մանաւանդ պատկերին նուիրման տրարողութիւնը խորապէս յուզեցին աւելոր Տնօրէնը, որ գրեթէ բաւ չգտաւ փոխարինելու երախտագրական այդ միահամուռ ցոյցերը:

ՆՈՐԱՆՈՒ ԲԱԺԻՆԸ

«Ծայրիկ»ի այս բաժնին համար յարկ մեր ընդունած բաղմամբ ու տանաւորներուն և մէկ քանի արձակներուն մէջ առաջին անգամն է որ կը հանդիպինք իսկապէս յաջող ֆանթազիլի մը, որուն պատճառելիք հաճոյքէն չենք ուղեր զրկել մեր ընթերցողները: Այս առթիւ կը հրաւիրենք մեր այս բաժնին բաղմամբ թեկնածուները, որպէս զի իրենք ալ փորձեն այս կարգի զբօսեցուցիչ և սրամիտ գրութիւններ, որոնք անշուշտ շատ աւելի կ'արժեն քան լուսինի, սոխակի, վարդի նուիրուած պայմանագրական ոտանաւորները: Կը յուսանք որ յետագայ գոյարիկ գրութեան հեղինակը նոյն ոճով եւ աննկատ ոգիով կը գրէ նաեւ մեր միւս թերթերուն վրայ ալ:

ՄԱՆՁՈՒՄԷ

Մըղում հանրոգոս ջերմ համոզումէ, Մեր անգուզական քերթը Մանգումէ, Լոյս եջերն այգուն կանուխ պարզում է:

Արժեքն իրական գինէն բազում է. Մեր անգուզական քերթին Մանգումէ Լեզուն հնչալից, համով լեզու մ'է:

Նուրբ յողումներով հոգին յուզում է. Մեր անգուզական քերթը Մանգումէ Կարգացողն՝ անյազ գայն յալիլիզում է:

Տախկոնքեանց դիւ միշտ ընդվզում է, Մեր անգուզական քերթը Մանգումէ Ուղղութիւն, պատիւ, ջանք փարզում է:

Միսքին հաւասար՝ սիրտն ալ մարզում է. Մեր անգուզական քերթը Մանգումէ Կարծես ծաղիկից գարեան ածու մ'է:

Բաժանորդի կապն ո՛վ որ խղզում է Մեր անգուզական քերթին Մանգումէ, Գիշերներն անկրկայ գայն երազում է:

Ո՛չ ծախք վախճող, ո՛չ նըւազում է, Մեր անգուզական քերթը Մանգումէ Օրե օր՝ հաւաքաւ, դրամ ղիզում է:

Ամեն սկսնակ հոն գիր խաղաղում է, Մեր անգուզական քերթը Մանգումէ Չայն խախտուել, մարդ ընել ուզում է:

Եւ միշտ փայտի առաջ վազում է, Մեր անգուզական քերթին Մանգումէ Մրցակիցներուն վերջը փուզում է:

Ուրիշ ամեն քերթ մինչ պաղ պօզում է, Մեր անգուզական քերթը Մանգումէ Լաբընձալ ալ չէ. ջալսւել իւզում է . . .

Հանրային տանոց այս պարտեզ ո՛ւն է . . . Մեր անգուզական քերթին Մանգումէ, Տերն է Գայտերեան . . . — Օրթի, Կրոնիսումէ . . . : Ա. ԳԼՈՐԳԵԱՆ

«ԾԱՂԻԿ»Ի ՆԱՄԱԿԱՆԻՆ

Վ.Ա.Ղ. Գ. ԳՐԻ. ՏՐԱՊԵԶՈՆ.— «Առուեստի փրկելոյն» համար, մեղք, ժամանակ ալ կորսնցուցեր էք: Կրկնուած տղերք երէ գեղջուին, ամէնէն հազիւ 10 տղ կը մնայ 50ին մէջ որ իրարու կը նմանին . . . : Առաջեցէ՛ք դեռ, ուսողիք մեզով կարգաւոր հեղինակաւոր գրողները, եւ մանաւանդ անոնց գրելու եւ նկարագրելու եղանակը ուսումնասիրեցէ՛ք: Կը ցույցն որ կարելի չէ մեզ սրբագործութիւններու միջոցաւ մասնակից ընել բոլոր սկարուքիւնները (կարուեստ փրկելոյն . . .):

Ա. Յ. ՊԱՆ. ՍԵՒԵՏԱՐ.— Սեյիսն պատմութիւնը շատ անհաշիւ կերպով գրուած է: Խառնակ ու բնաւորի բացատրութիւններով որոնք սիրուն կամ անհաշիւ ըլլալու հրապոյրն ալ չունին: Շատ վարպետ գրչի գործ է արդէն—պէտք է գիտնալ—գոյն, համ ու կիսակ սպառնային միջոց ու անհաշիւ նկարներ: Երէ չէ՛ յաջողած, մեղադրելի չէ՛ ամենեւին: Լօկալէսէ՛ք բարգաւաճութիւնի բաղադրանքը: Կարգաւոր մեղք:

ԿԱՆԱՆ. Պ. Վ.—Ա՛ն, թէ . . . բացուելու ըլլաւ . . . :

Թ.Յ.Գ.ՄԱՆԻՉ. ՌԱՏԱՍԹՈ.— Սոխակը՝ ո՛ն, խալ է:

ՊԵՐՃ. ՀԻՒՄԻՆԻԿ.— Չեմ գրելու ջանքեր գովելի են եւ զգացումներն ալ՝ գնաւ հասելի: Կը ցույցն որ անոնց լոյս տալ չենք կրնար ա՛յս էջերուն մէջ՝ որոնք բնութագրուեալն օգտակար ըլլալու կամ հոգեկան համոյժ մը պատճառելու անհամարուած են:

ՍՏ. ԵՐԿ. ԻՉՄԻՐ.— Ստուգեցիք որ նոր յերթաւոր մըն է ձեր բացատրական նամակը: Վ. Շ. ամուսն անձ մը գոյարիւն ունի՞՞ ձեր քով իսկ . . . : Սակէ վերջը ալ տա՛ մի՛ առնէ՛ք Ծաղիկին դուռը: Չեզի համար բացուելիք չունի անհաշիւ: Ներքէ բարով:

ՊԻՆՉԻՍՏԻՆ. Կ. ՊԱՆԻՍ.— «Նուրբ» յաջողակ եւ նկարէն տղեր ունի: Գի՛շ մըն ալ՝ եւ պիտի լաւ նիւ տանք ձեզի:

Վ.Ա.ՂԱՆԻՍ.— Կ. Պ.— Փայլիկին յիշատակը չենք ուզեր տրեցնել . . . : Իսկ կը փութանք սրբի մ'անցումն (Ռուստանը կարծիք վրայէ՛ն որուն մէջ կ'ըսէ՛ք թէ . . . Խոյրեռն շէնոյ խորձեր անհամար ճիւղեր նմայք մը կը ցոյցն մեզ վերէն. Վարդ, հիւ ու ցոյլ իրար գրկած, հոն հեռուն, Նուրբ հիւսնով մը կ'արդուէն իմ հոգին Մինչ լսեցիս խորձն ալ, նմայիկ արեւուն, Ծո՛ւ պատճառ մը կ'առնի հանգէպ երկինքին . . . :

— Երէ արդուք հրաւել ըլլալ հապա՛, եւ հոգեկան բանկարէն . . . անմիջապէս ծով պատճառէ՛ն մէջը նետուեցէ՛ք— որ մարիք:

Ա. ԳԼՈՐԳԵԱՆ. Կ. Պ.— Ստուգի պէս նուրբ ու սուր գրչի մ'ունիք, ամուսն ներքաւսեանն օն մը, զոր ամէն մարդ կը հաւատէ, ալ զոր շատ բնիկ կը հանգստան կամ կը մտաւոր մեր մէջ: Մանգումէ՛ն եսք, կը պատկերն որ մեր Ծաղիկը գովարանէ՛ք քիչ մը, — փերուսելով իսկ գայն, երէ կ'ազնէ: Կը ճնշուաւորենք ձեր յաջողութիւնը:

ԿԱՅԱՅՑ ԲԱԾԻՆԸ

ԿՆՈՋ ՏԻՊԱՐՆԵՐ

(ԱՌԱՋԻՆ ՅՕԴՈՒԱԾ)

Կիններ կան, որոնց Բախտը՝ այդ կամ-
չոտ դիցուհին, պարզեւած է ոչ միայն
գեղեցկութեան և տաղանդի ձիրքերը,
այլ նաեւ բարձր միջավայր մը, ուր կա-
րող են յաւաքողիմել և գանձել հիացողնե-
րու շրջանակ մը: Դասական շրջանի մէջ
չառ քիչ կ'ընկուէր կը հանդիպէին, որոնց
շնորհուած ըլլան այս ձիրքերը: Սափիով
կրնայ ազնուական ընտանիքէ մը սերած
ըլլալ. անտարակոյս Ասրաօնա ալ ազ-
նուական ծագում ունէր, բայց անկող ա-
ւելի կը վերադարձեր կէս բարձր շրջա-
նակի մը: Իսկ հրաշալի Հիւրադիան, չոր-
րորդ դարու վաւակ, որ դուռտուն էր Ա-
ղեքանդրիոյ Պալատական Գաղտնիքի պե-
տին, անտարակոյս կ'արհամարհուէր իր
վարժուհի՝ ինչ Եղիշատի գուռը կ'ընե-
րէն, որոնք կը նախանձէին անոր հա-
բաւին վրայ:

Բայց առաջին անգամ կ'են անհոտա-
կանութեանց հանդիպելու համար, պէտք
է մինչեւ տառնուհին գերորդ դար բարձ-
րանալ, ուր ամէնէն ուշագրաւ կ'ըն գէ-
քերն են Նափաօի Մարգարիտն ու Վիդ-
դօրիս Քոլմանն, երկուքն ալ Գեղար-
ուեստական Վերածնունդին հրաշալի ար-
դիւնքները:

Նափաօի Մարգարիտը կամ «տառնու-
րորդ Մաւան» — ինչպէս սովոր էին ան-
ուանել զայն — անձուէր քոյրն է Ֆրան-
սուս Ա. Թագաւորին և մեծ մայրը՝ Հանրի
Դ. ինչ Իվրի հերտոն: Իբր գրական գործ
թողած է Եօթնօրեակը, որ հաւաքածոյ
մըն է վրան բաց պատմութեանց, նմա-
նողութեամբ Պաքաշիոյի. այդ պատմու-
թիւնները ժամանակին բարձրորդն համա-
ձայն գրուած բաներ են և անոնց մէջ
Մարգարիտ աշխատած է միշտ բարոյա-
կան մը զննել:

Գրականութեանց մէջ թերեւս ոչ մէկ
հեղինակի իրական կեանքն այնքան տար-
բեր եղած է իր գործերուն բաղդատմամբ,
որքան այս սիրուն և լայնախոհ կնոջ
կեանքը. ան, իր եղբորը բարկութեան
գէտ վաճանի մը պէս կանգնեցաւ բողո-
քականները պաշտպանելու համար և ազ-
րեցաւ մաքուր և ուսումնասէր կեանք մը
ժամանակին Ֆրանսայի մէջ տիրող ազ-
տոտ բարձրին սուանց ընաւ ազդուելու:
Մարգարիտ՝ քաղցրասիրտ և գորովագութ
բարեկամն էր անոքին, անկեալին, նեղ-
ուածին:

Տառնուհին գերորդ դարուն խաղացի
նշանաւոր կ'ընկուէր մէջ ամէնէն ուշագրաւ
գէտքն է Վիդդօրիս Քոլմանն, որ սե-

րած էր խրոստ ընտանիքէ մը: Ամուլջ
տառնուհիու հարկներ ամուսնական եր-
ջանկաւոյն կեանքն տարելէ ետք Քոլմա-
նան այրի մնաց, զիւ երիտասարդ, գե-
ղեցիկ և հարուստ: Շատ աղնուական և
բիտաւարողներ դարձան ըրին անոր, բայց
ինք նախաձեռնար համարեց իր ամուս-
նոյն յիշատակը սուրբ պահել. նոյն իսկ
մէկ քանի բանաստեղծութիւններ գրեց,
որոնցմով խաղականացոյց իր յանդուգն և
պատերազմիկ ամուսինը: Այդ խաղա-
վառ ձայնակներուն շնորհիւ էր որ շա-
հեցաւ «Նախախնամային Վիդդօրիս» անու-
գտը, ինչպէս նաեւ տաք համակրութիւն
մը Ֆերրարայի և Հումբը գրական շրջա-
նակներուն մէջ. կարգինալ Բօլի և Մի-
քաէլ Անձէլայի պէս բարեկամներ ալ շա-
հեցաւ և այս վերջինին հետ մինչեւ վերջը
գաղափարային մտերմութեան կապով մը
կապուած մնաց: Միքայէլ Անձէլօ զայն
նախախնամութիւն մը կը համարէր, և երբ
Քոլմանա մեռաւ, Անձէլօ ծուր եկաւ ա-
նոր գազալին քով և ձեռքերը համբու-
րեց, իտրապէս ցաւ զգալով որ անոր բեր-
նէն չէր լսած մնաք բարոյի ողջոյնը:

Այս շրջանին անդիւրացի կ'ընկուէր շատ
աննշան գեր մը խաղացին Գեղարուես-
տական Վերածնունդին մէջ: Եղիշատի-
կան Գարուն միջոցին, անդիւրացի կ'ընկուէր
ընդհանրապէս իրենց անպար ընտրած էին
այդ հոժիւս. միտքի տէր թագուհին, որով
եղան գործի և գործունէութեան կ'ընկուէր:
Այս շրջանին ողին ի յայտ բերող ուշագրաւ
գէտքը Աննա Քլիֆֆօրտն է, Բէմպո-
քի և Տորսէլի կամուհին, որ Եղիշատի-
թագուհին աչքին լցան էր, իբր գրական
գործ թողած է օրագիր մը, որուն մէջ
միամտօրէն և պարծնականութեամբ կը
նկարագրէ իր հրապոյցները:

Ֆրանսայի մէջ, տառնուհիները
գտրուն, կ'ընկուէր գրականութեան և քա-
ղաքականութեան վրայ մեծ ազդեցու-
թիւն ունէին, մինչեւ 1793: Բանալու-
մարքիզուհին չքեղ ընտանական մէջ
կը հաւաքուէին ժամանակին ամէնէն
վաղուն անձնաւորութիւնները որոնք այդ
դարուն շուրջութիւնները կը պարտաւէին,
և խորապէս կը կրէին ազդեցութիւնը ուս-
եալ և աղնուական կ'ընկուէր — թանկագին
կ'ընկուէր, ինչպէս կը կոչէին անոնց վրայ
հիացողները: Ասանք այն տիպարներն են,
որոնց ծայրայեղ վափկածաշուկութիւնը
ծաղրեց Մոլիէրն:

Ամուլջ յիսուն տարուան շրջանի մը
միջոցին Տիլլին Բամպոքէի սալմը միշտ
ժամագրովալը մնաց նշանաւոր գէտքե-
րու, ինչպէս Մալէրը, Քոլմանը, Աքար-
րոն, Պօսիւէ և երիտասարդն Արման ար

Բըլէսի — որ յետոյ պիտի ըլլար Կարտինալ
Ռիշլիէօ: Այդ սալմին մէջ էր որ ամէն
տեսակ խնդիրներ կը ծեծուէին, գրական-
նութեան և լեզուի քերականական մաք-
րութեան վրայ վիճարանութիւններ կ'ըլ-
լային և որոնք ի վերջոյ պատճառ կ'ըլլա-
յին Ակադեմիայի մը հաստատման: Իսկ
կ'ըն աղնուական մէջ մտնաւ որտար
պէտք է յիշել Մատամ Լաֆայէթ՝ վիպագիրը,
որուն պղատմական տէր միջոցաբեց չնա-
կաց փիլիսոփայ՝ Լա Ռօշֆօրտի վերջին
տարիները: Այս տեսակ մտերմութիւններ
այդ շրջանին միայն յատուկ էին: Նմանօրի-
նակ յարաբերութիւն մըն ալ Մատմուազէլ
ալ Աքլաուէրին հաստատած էր Բէլլիօնի
հետ: Այս օրիորդին գրած վէպերը՝ Մեծն
Կիւրտը, զոր օրինակ, օրուան ազմիայոյդ
նորութիւնները կ'ըլլային միշտ: Սովորա-
բար տառնուհիու հասար կ'ըլլային իր վէ-
պերը և չորս տարուան մէջ կը հրատա-
րակուէին:

Օր. Աքլաուէրի պատմական վէպերուն
չուտով յաշորդեցին սակայն Մատամ մը
Դանտէի գրածները, Սիրոյ Գծախառու-
քիւնները, զոր օրինակ, ուր առաջին ան-
գամ մուտ գտան «անկաշկանդ սէրերու և
անյոյս մահերու» պատմութիւնները: Մա-
տամ ալ Դանտէն անոնց մէջ կը խօսէր
կրքին պատճառած բոլոր պերճախօսու-
թեամբ, իր մուսկալմած կեանքը նկարագ-
րելով: Պէտք է յիշել որ Բօլին Ալէքսանտ-
րին ալ Դանտէն գեղանի, հրապուրիչ,
արափա կ'ըն մըն էր, որ սակայն իր ազ-
քառութեան պատճառաւ չկրցաւ ամուս-
նանալ, և հետեւեալը մայրապետ եղաւ
վանքի մը մէջ, ուր հեռանքը պահաւէր
սակայն:

Վանքին մէջ մտնելով Բօլին շատ շու-
տով սկսաւ զբաւ ցանկութիւնները դուրսի
աշխարհին և վերջապէս յաջողեցաւ աղա-
սիլ իր բրած երդումներէն և Բարիդ եր-
թալ: Անգամ մը հոն, իր վաւաչոտ եղ-
բոր տանը մէջ հաստատուելէ ետք, շուտով
իր շուրջ հաւաքեց հիացողներու խմբակ
մը: Այս տառնուհիւ քանքը նոր թեւակու-
լած էր: Գեղեցիկ ազդիկ մըն էր, գեղե-
ցիկ բառին լայնադոյն աւուսմով, նուրբ
գլխադէրով, խոշոր սեւ աչքերով, խոր-
հրաւոր ժպիտներով, որոնք Մօնա Լի-
զայիններն էին կարծես:

Այս եղական գեղեցկութեան, ինչպէս
նաեւ ճկուն մոքի մը չնորիւ հրապուրեց
նոյն ինքն Օրլէանի Դուքսը, որ կարճ
ժամանակ մը անոր հետ ապրեցաւ, բայց
յետոյ թողուց զայն, տեսնելով որ այդ
գեղանի կ'ընք ամէն տեսակ ազդեցու-
թիւններ կ'ուզէ բանեցնել իր վրայ:

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Կ Ե Ա Ն Ք

ՊՈԼՍՈՅ ՀՐԱՊԱՐԱԿԸ

(ՂԵՅՈՒՄՍԵԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ)

Չմուր կրկար առեց այս տարի, մա-
նաւանդ գաւառները, ուր առեւտուրին
զօրաւոր թափով մը սկսիլը կախում ունի
միշտ ձմեռուան շուտով վերջանալէն. թէեւ
պատահական յաճախողներ գաւառներէն
եկան և սակայն տեսնելով հրապարակի
ամէն տեսակներուն վրայ գիններու սղու-
թիւնը, համարձակութիւն չունեցան մե-
ծաքանակ ապրանք գնելու և իրենց պէտք
եղած ապրանքին մէկ մասը միայն գնելով
մեկնեցան:

Միւս կողմէ Պոլսոյ ամէն կարգի վա-
ճառականները յուսալով որ գարնան առեւ-
տուրները մեծ ոգևորութեամբ պիտի սկը-
սէին, այդ հաշւով մեծաքանակ **engage-**
mentներու մտած էին, որով յաւուարէն
սկսեալ իրենց յանձնարարութիւնները մէկ
կողմէ բեռնաւոր և հանելու վրայ էին:

Ճիշդ այդ պահուն էր որ մեր հրա-
պարակը քանի մը իրարու յաջողող, մէկը
միւսը գերազանցող խոշոր մանկութիւն-
ներու տխուր ազդեցութեան կ'ենթարկե-
ուէր. ամէն առեւտուրի մարդ մտահոգ
կ'երեւէր զանազան հեռատեսութիւններ
ուրուագծելով իր մտքին մէջ, թէ, օրի-
նակի համար, այդ մանկութեանց հետեւ-
ւանքով ուրիշներ ալ թերեւս մանկանա-
լին: Այս խորհրդածութիւնները լրագիր-
ներու մէջ ալ երեւցան, թէեւ շատերու
կողմէ ալ, այս կամ այն վաճառականին
մասին ուղղակի կամ անուղղակի կերպով
մատնաւոր ակնարկութիւններ ընելը պար-
զապէս չափու ազդեց մը, **chantage**ի մի-
ջոյ մը եղած էր. ինչ հանգամանքի տակ
ալ յերկրորդում ըլլային այդ պարբերա-
կան յօդուածները, գտան սակայն անոնք
իրենց արձագանգը մինչեւ եւրոպա, ամէն
կողմ, ամէն գործարանատէր մէկնալը,
այնպէս որ այս վերջինները հարկադրուե-
ցան պահպանողական ընթացք մը ունե-
նալ Պոլսոյ վաճառականներուն հանդէպ,
զգուշաւոր կերպով գործի սկսիլ անոնց
հետ, սեղմել վարկի սահմանը և տակաւ
կանխիկի գրութեան վերածել իրենց գոր-
ծառնութեան եղանակը:

Երբ մէկ կողմէ գործարանները իրենց
յաճախողներուն հետ կանխիկ միայն գոր-
ծել կը սկսին և միւս կողմէ ալ վաճառ-
ականներու յանձնարարութիւնները ա-
նընդհատ կը համսին, գիւրդին է երեւա-
կայիլ թէ, իրաց այս վիճակին հանդէպ
վաճառականները ո՛ր ատիւնովի գրամա-
կան նեղութեան և անտեսական տալանա-
պի կ'ենթարկուին. ասկից զատ երբ օր-
տինս տրուած ապրանքները իրարու հետ-

ւէ կը հասնին ու չեն ծախուիր, վաճառ-
ականը հարկադրուած է այն ստան հոր
միջերոնոցներ վարձել, ինչ որ իր գէտ
անտեսական հոր դժուարութիւններ տեսզ-
ծադործելով հեռզնեռէ գինը աւելի ճա-
խող մտահոգութեանց կ'ենթարկէ. այս ր-
սածներու խելութիւնը մոռնիլ ցոյց տա-
լու համար չեմ վարանիր յայտնելու, օրի-
նակի համար, թէ մեր հրապարակի շատ
ծանօթ վաճառականներէն մէկ, ասկից
գրեթէ 2-3 ամիս առաջ, Սամսոնի համար
192 հալ հնդկական ապրանքունէր որոնք
Սամսոնի Մաքսը եղած էին ժամանակին.
սակարկութիւնը բեռնատու մի փոխութեմ
(**contre connaissance**) ըլլալուն, բեռնա-
տուրը Պանքային զրկուած էր որպէս զի
այս վերջինը յիշեալ 192 հալին արժէքը
վաճառականէն ստանալէ վերջ միայն
բեռնատուրը անոր յանձնէ. գիւրդին գործ
չէր այդ տուն երկու հազար տկիլ մօտ
գումար մը անմիջապէս հալթայթելով
Պանքային վճարել, թէեւ ապրանքները
շատոնց ի վեր կը ապաւէին Սամսոնի
Մաքսը, անանկ որ ութօրեայ պայմանա-
ժամն ալ լրացած և օրինական մքերանցի
վճարքին (արտիկ) ենթարկուած էին:
Սոյն 192 հալ հնդկական ապրանքները
յանձնարարող վաճառականը նկատելով
որ այդ ապրանքները որքան Մաքսի միջե-
րանոցները ապաւէին, այնքան աւելի բազ-
մապատկուած ծախքերու գում. պիտի
բանային իր գլխուն, կը ստիպուէր զա-
նոնք Պանքային միջոցաւ, մաքսէն քա-
շել տալով Պանքային միջերանոցը փո-
խադրել և հան միջերել տալ, ինչ որ բազ-
մապատկար Մաքսատան միջերանոցի վարձ-
քին աժանութեան տեսակէտով զգալի
սարքերութիւն մը կ'արտադրէր: Այս լուրը
ամէնուն ականջին հասած էր թէ Պան-
քային միջերանոցը 192 հալ միջերուած
հնդկական ապրանք կար որոնք տիրոջը
պիտի յանձնուէին այն տուն միայն երբ
այս վերջինը կարող ըլլար փոխարժէքը
ամբողջութեամբ ծախելով Պանքային վճա-
րելու:

Դրամական ապշանալին վրայ պարզ
գաղափար մը տալու համար միայն ներ-
կայ օրինակը մէջ բերի. այդ օրինակ տալ-
նապի մը ենթարկուած են հիմայ, մեր
հրապարակին վաճառականները, անոր հա-
մար որ մեծ գործառնութեանց ակնկալու-
մով գալնամի համար մեծաքանակ ապրանք-
րանք տուին, և սակայն այդ համեմատու-
թեամբ գործառնութիւն տեղի չունեցաւ:

Հակառակ եւրոպական հրապարակին
վրայ տիրող բամբակի և մանիֆաթու-
րայի գիններուն սղութեան, հոս ի Պոլսոյ
և ներքո՝ գաւառները, ասկից գրեթէ
մինչեւ երեք չարսթ առաջ անտարբեր

ընթացքի մը, անտարբեր վիճակի մը մաս-
նաւոր էին, այսինքն գիններու բարձրա-
ցումէն ազդուելու հակամիտութիւն մը
չէր երեւեր. մանաւանդ որ դրամի պէտքը
ստիպած էր շատերը որպէս զի ասոնք գի-
ներու բարձրութեան ականջ չի դնելով,
իրենց ապրանքները չկարենան գնահատել
տալ, և ճիշտ՝ գիններու անկման տուն
մրցումով զիրար գրելու շատ ընտան և-
բեռնային պէս, վերջի սղութեան տուն
ալ միեւնոյն յոռի ընթացքը ունեցան միշտ
ի վրայ իրենց. և յաճախողները, եւրո-
պայի գիններուն սղութեան արձագանգին
և Պոլսոյ վաճառականներուն այս ընթաց-
քին մէջ զարմանալի հակամիտութիւն մը կը
նշմարէին, և զարհուրած՝ շատեր առանց
ապրանք իսկ գնելու իրենց սեղը կը վե-
րադառնային. ինչո՞ւ այս ընթացքը, վա-
ճառականը երբ գիններու սղութեան ա-
տեն չի շահի, ուրեմն ե՞րբ չափի, շատ
խոհեմութիւն շատ խելացութիւն է մա-
նաւանդ գիններու սղութեան տուն, գին
չի կտրել, և ապրանքը գնահատել տալ
գիննալու գաղափարին անտեղեակ մէկը
թող տեղը ծանր նստի, ինքզինքին վա-
ճառական անունը չի սոյ կրք այդ ա-
նունը կրելու իրաւամբ արժանի չէ, վասն
զի այսօրինակ յոռի ընթացքի մը հետեւ-
ւողներու վախճանը տեսնալ ասկից վեց
ամիսներ առաջ, մէկ խօսքով ինքզինք-
նին անանկութեան կը պտորտատեն, կ'ազ-
ստան թէ՛ հրապարակը, թէ իրենց պա-
սիւը և թէ իրենց հաւաքովը:

Ապրանք մը գնահատել տալ չգլխունա-
լուն արդիւնքն է այն սղեղ տեսարանը
որ տեղի ունենալու վրայ է այս օրեյտ
կարգ մը վաճառականներուն առջեւ —
յաճախողաց անցած տները թեւերուն
բռնել ներս քաշել, իրարու բերնի հոց
գողնալու երեւոյթով, ճիշդ Գալիաքը-
լար-Պաշէի խանութպաններուն պէս. ա-
ստանկ պէտք չէ ըլլայ վաճառականին բն-
թացքը, յաճախողը գինը փնտռելու է:

Ասկից մինչեւ երեք չարսթ առաջ
գաւառները բացարձակ երաշտութեան
մատնուած էին, բայց, հազար փութ հա-
խանաւորութեան, անձրեւները շուտով հա-
տան. ապէն կողմ արմիրի բերքը տալա-
սան, ասէն կողմ արմիրի բերքը տալա-
նովուած է, սոխի, թուշակերի, խոզակի
հունձքը լաւ է: Պոլսի կողմերը չարսթու
ձիւն գալուն, աֆիօնի հունձքը նուազ կը
յուսացուի այդ կողմերը. վերջապէս հունձ-
քի մասին գաւառներէն հասած լուրերը
շատ նարատաւոր ըլլալուն, վաճառա-
կանները մեծ յոյս ունին թէ, գարնան
ճիշտ հակառակը ըլլալով, աչունին շատ
աւելի ոգևորեալ գործառնութիւններ
պիտի կարենան ընել:

Խ. Պ.

«ԾԱՂԻԿ»Ի ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կ. Պոլիս, Մայիս 26, 1903

Ազգիս Բարոնակեան Էմէնի

Յետ Ողջերթի՝ Ողջոյն կը խնդրէք մեզմէ «Խնդրոյն բուն հոգիին պատասխանել, մինչդեռ մենք պատասխանած ենք արդէն խնդրոյն թէ՛ հոգիին, թէ՛ մարմինին (տես Դաղիկ՝ ԹԻՒ 14)»:

Մեր յօդուածին մէջ այս անգամ ուրիշի անուան ակնարկութիւն էք տեսներ և կը բողոքէք. պէտք է որ բողոքն ընէ այն ուրիշը ո՛չ թէ՛ Դուք: Մեր գործին և արհեստին ակնարկութիւն չկրնէք, առանց այն մասին լաւ ծանօթութիւն քաղած ըլլալու: Մենք պատմենք Ձեզ մեր գործը—միշտ լուծել և վերլուծել, քննել, կշռել և հակակշռել, և զին վճարել արժեքներու միայն: Փորձելու, զննելու այս հանապազորութիւնը, երկրորդ բնութիւն եղած է մազ:

Մայիս 21ին դարձեալ կը պատահէր մեզ Ձեր հին հանգամանքով, այն է՝ անփաստ, անվկայ, անվաւեր: Դարձեալ չունիք մատենագրութիւն: Միայն տեղ մը ընդհանուր կերպով մը կ'ըսէք «Ընտիր մատենագիրները վկայ»:—Ո՛րքնտիր մատենագիրները, և ի՞նչ բանի վկայ: Միջոցը կը պակսէ՞ր Ձեզ յայտնի ցուցնեմեր առջեւ թէ այն ոք մատենագիր՝ այն ինչ տեղ կը գործածէ հեցից, թէ այս անուն հեղինակ այն ինչ առթիւ քարոզած է (յաւուրքս)ի անհնարութիւնը:

Կ'ըսէք մեզ թէ «երկու հատ յաւուրքս եթէ կարող ըլլաք ցուցնել, ես ատոր զէմ պատրաստ եմ երկու հարիւր հատ ցոյց տալ ճիշդ գործածութեամբ»: «Ծիշտ պործածութիւն» ըսելով յաւուրքս յայտնի կը կ'ակնարկէք:

Բայց ո՞վ ըսաւ թէ խնդիր կայ յաւուրքս յայտնի կ'ըլլայ, ո՞վ ըսաւ թէ «անճիշդ է, պարզ գրաբար չէ, սովորական չէ» եւն: Այդ «ճիշդ գործածութիւն»ը քաջածանօթ էր մազ ի մանկութենէ, երբ կը վարժէինք առ ոտս Համառոտ Բերականութեան:

Եւ ի՞նչպէս յաւուրքս պարունակող վրկայութիւն կ'ուզէք մեզմէ, մինչ Ձեր քով վկայութեան նշոյն անգամ ցարդ չերեւցաւ: Եւ ի՞նչ պիտի ընէք զայն, արդեօք Օր բառին գոյութիւնը պիտի հաստատէք անով. չ'արժեք: Իսկ Գով և Սով յանգեալ յոգ. նախգրիւ հայցական ձեւին գոյութիւնը հաստատելու կամ ժխտելու համար, անհրաժեշտ պէտք մը չիկայ Օր բառին, վասն զի կան ուրիշ բառեր որ զգեցած են զայդ ձեւ: Կարող չէք միտել ձեռն գոյութիւնը, առարկելով թէ ինչո՞ւ Օր բառով օրինակ չիկայ անոր, ինչպէս կարող չէք ժխտել ծանօթ costumeի մը գոյութիւնը՝ առարկելով թէ ինչո՞ւ Կիրակոս զգեցած չէ զայն: Արդէն Դուք ալ կէս մը կ'ընդունիք այդ քերականական ձեւին

գոյութիւնը (թէեւ կ'ըսէք թէ անսովոր է), և փաստ մը չունիք ի ձեռն՝ հաստատող թէ այն ձեւ չկրնար Օր բառին վրայ դալ: Օր բառը չէ՛ որ պիտի մերժէ ձեւին հպատակիլ, և ձեւը չէ՛ որ պիտի մերժէ Օր բառին վրայ դալ, ցորչափ օրինական արգելք չկան առ նոյն: Եթէ կան օրինական արգելք որ թոյլ չեն տար անոնց շարժաշարութիւն, Ձեզ անկ է զայն ի վեր հանել:

Առաջին անգամ ըսիք թէ «յաւուրքս յայս բացատրութիւնը պէ՛տք է ըլլայ «յաւուրքս յայտնի»», յետոյ՝ ըստ յառաջել ժամանակաց՝ «անսովոր է». եւ այս սօր՝ կը կրկնէք եւ կը կրկնէք զայն՝ իբր թէ ցարդ բան մը խօսուած չըլլար այդ մասին: Ինչ որ ըսած ենք արդէն Ծաղիկի 14րդ թուով և յառաջագոյն իսկ:

Նուրբ զանազանութիւններ ալ կ'ընէք «խոտեղի»ի եւ «ոչ ընտիր»ի Դրաբարի մէջ՝ քերականական ձեւի մը, անանձին ասացուածքի մը աղնուութիւնն ո՞ր կը սկսի եւ ո՞ր կը վերջանայ: Կրնա՞ք ճշդել: Բայց կրնա՞ք թէ չկրնաք, սա՛ ճշմարիտ է թէ գրաբար գրեւ լու մասին մեր ըմբռնումը հիմնովին կը տարբերի ձեր եւ նմանեաց ըմբռնումներէն:

Դանք մեր հին բարեկամին, հեցիցին: Եթէ ընթերցողներու համբերութիւնը չըս պառեցաւ՝ հրաշք մ'է: Դարձեալ Ձեր հնացեալ յանկերդը «հեցից կ'ըլլայ, հեցիցից չըլլար»: Բայց թէ ի՞նչպէս չըլլար, եւ ինչո՞ւ չըլլար, զայդ չէք ըսեր: Լսողութեամբ տկար մէկու մը պէս, որ չլսողի տաղկաբեր թախանձանքով կը ստիպէ իր խօսակիցը կրկնել եւ վերակրկնել զայն ինչ՝ զոր քանիցս արդէն խօսած էր, դուք ալ, իբր թէ բանիւ լսած չըլլայիք մեր բերնէն, դարձեալ կը խօսեցնէք զմեզ:

Եթէ պատասխան կուզէք, բռնեցէ՛ք ծաղկալից ճամբան թիւ 14 «Ծաղիկ»ի հոն պիտի գտնէք ձեր փնտռածը երկիջեան բացատրութեանց մէջ:

Դանք Ձեր խորհրդածութեանց ամենէն փիլիսոփայականներուն: Կ'ըսէք. «հիմայ (մայիս 10) տեսէք թէ հեցից, երբ յոգ. ուղղական է, կ'ըլլայ հեցից, ուր արմատական նն կորսուած է. ձեր տուած օրինակը, երբ, զոր կը համարէք ձեր կարծեաց նպաստող, նկատեցէք թէ մեր կարծեաց նպաստող է. յոգ. ուղղականին մէջ արմատական նն կը մնայ եւ կ'ըլլայ երկուսն, որմէ սեռական երկուսից, եւն:»

Մենք կ'ըսենք. Հիմա (մայիս 10) չէ՛ որ պիտի տեսնէք թէ հեցից, երբ յոգ. ուղղական է, կ'ըլլայ հեցից. նախապէս (մայիս 3) ըսած ենք զայդ: Բայց թէ ատկէ (յոգ. ուղղականէն) կ'ըլլէ եղբ հեցից ձեւը՝ բացէ ի բաց կը մերժենք. Նաեւ թէ երբ բառին յոգ. ուղղականին մէջ արմատական նն կը մնայ եւ կ'ըլլայ երկուսն, զայդ ալ հիմա (մայիս 10) չէ՛ որ պիտի տեսնենք, այլ յառաջագոյն մայիս 3) երեւցուցած ենք զայն Ձեզ: Կը մնայ Ձեզ տեսնել թէ երբ, օրն, հեցից բա-

ռերուն յոգ. սեռականը իրենց ուղղականէն կ'ընեն, թէ կը հետեւին իրենց եզակի սեռականներուն:

Եթէ ուղղականներէն ելնէին, պիտի ըլլային

Երկուսն օրհնիք չենք
Երկուսն օրհնեաց չենք

մինչդեռ այսպէս չեն ըլլար, ալ եզակի սեռականաց կը հետեւին

Երկուսն օրհնի չենք
Երկուսն օրհնից չենք

Այս կերպով այլ եւս հարկ չի մնար ճշտողել թէ «հեցից ուղղակիէն կ'ըլլէ հեցից»:

Նաեւ ուղղականին մէջ և արմատականին անկորոշուտ մնալն ի՞նչ կ'ապացուցանէ եղբ ի նպաստ Ձեր կարծեաց, զանցըրեր էք ըսել: Թիւ 14 Ծաղիկի մէջ խօսած էինք Կորուսման և Անջատման երեւոյթներուն վրայ որք կ'երեւին հեցից, երկուսն, օրհնիք յոգ. ուղղականներուն մէջ, Մատենագիրք, ըսած էինք, այլ եւ այլ հնարքներ ի գործ դրած են միավանկ հոլովից մէջ քառեակ բաղաձայնից խոսկումին դէմ. զոր օրինակ, Կորուսման հնարքը հեցից մէջ [հեց(ն)ք]. Անջատման հնարքը—միջադրութեամբ ու երկբարբառին—երկուսն մէջ (երկուսնք). զա՛րձեալ Անջատման հնարք օրհնիք մէջ—միջադրութեամբ ի ձայնաւորին—(օրհնիք):—Հոս ի՞նչ կայ եղբ ի նպաստ Ձեր կարծեաց չենք գիտեր:

Մենք, հարկ չկայ ըսել, ընդունած ենք թէ երկուսն յոգ. ուղղականին մէջ երեւցած նն արմատական նն է. Բայց սխալ է կարծել թէ ուր որ ունք յոգ. յանգ մը կայ, անպատճառ եզակի մէջ արմատական ն մը պէտք է ըլլայ: Կրնա՞ք ցուցնել մեզ թէ ճիշդուց, պառաւորուց, առիւծուց, եպիսկոպոսուց, ևն. յոգ. ուղղականաց եզակի ձեւերուն մէջ ո՞ր կը գտնուին արմատական ներք: Դրաբարի խնդրոց մէջ քիչ մը չըջահայեցութիւն պէտք է, ուր բացարձակ տիրական խօսուածք մը միշտ զափնի չի բերեր մարդուն:

Քիչ մ'ալ յիշենք մեռեալները: Կը գրէք. «Ի՞նչ հարկ մեռեալները անհանգիստ ընել իրենց գերեզմաններուն մէջ, զանոնք իրաւարար կանչելով, ողջ իրաւարարներ կը պակսէին»:—Սիրուն խօսք: Մատենագիրք որ կը մեռնին—մանաւանդ գրաբարի մատենագիրք—այլ եւս կը գաղթին ձայն ունենալէ լեզուական խնդրոց մէջ, եւ գործը կը մնայ միայն անոնց որ կը չնչնեն: Կը կարծէք թէ օրհնութի վայրկեանին՝ Մատենագրութիւնը մահակից կ'ըլլայ Մատենագրին: Մենք ընտրած էինք գրաբարի հականեր, եւ ոչ թէ գաճաճներ: Ձրսի՛նք արդէն անցեալ անգամ թէ «երբ խնդիրը գրաբար լեզուագիտութեան կը վերաբերի, աշխարհի բոլոր իրաւարարք մեր իրաւարարներուն հանդէպ զանգ մը չ'են արժեք»:

Տ. ԵԼՔԵՆՃԵԱՆ

Արտօնատէր Ա. ՍԱԳԱՆԱՆ

Տպագրութիւն Սագանեան
Կալաթա, Դուրլունցու խան քիւ 7

ԱՊԱՐԱՐԻՎ ՄԻՆՈՒՅԵՐ
ԶՊԻՏԻՍՏԱՆ



ԱՊԱՐԱՐԻՎ ՄԻՆՈՒՅԵՐ
ԶՊԻՏԻՍՏԱՆ

ՀԱՅ ՍՆՏՈՒԿՅԻ ՄԱՔՍՈՒՏ ԿԸԼԸՃՃԵԱՆ

Էսկի-Ջապրիե

Ճամբորդներու համար 50% զեղչ
Ամուսնուներու համար 10% զեղչ
Աղջիկներու համար 50% զեղչ
Զորս անգամ կարգուդներուն

ԶՐԻ

Թիթիլ ամենէն առողջապահիկ ըմպելին է
Թիթիլ ամենէն առողջ ըմպելին է
Թիթիլ ամենէն մանկաբար ըմպելին է
Թիթիլ է որ կը զիւրացնէ մարսողութիւնը

Ա. ԱԼԵՄԵԱՆ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԻՅԻ

Թանգարան փողոց, բիւ 49

Ա. ԱԼԵՄԵԱՆ Թիթիլ մեծ յ. ճառատունը
ունի ամեն տեսակ հոտաւէտ ու համեղ
աղիւ տեսակէ թէյեր, շատ ածան գինե-
րով, Գաւառներէ կ'ընդունուին ա. էն տե-
սակ յանձնարարութիւններ եւ կը գոր-
ծադրուին կատարեալ ճշգրտականութեամբ
եւ ուղղութեամբ

ԱՏԱՄՆԱՐՈՒԺԱԿԱՆ ԸՆԴՀ. ՄԹԵՐԲ
ՄՕՐԻՍ ՖԱՐՃԻ

Ղալաթիա, Մերքեպանի փողոց, ձեւիտ խան, 3
ԿԱՆԻՍԻԿ ՎԱՃԱՌՈՒՄՈՎ
Թուրքիոյ ամեն կողմերը կը զրկուին
ապրանքներ

ԱՐԱՄ ԳԱՐԱԳԱՅԵԱՆ

Ա. Տ. Ա. Մ. Ն. Ա. Բ. Ո. Յ. Ժ.

Պոլիս, Պանգե Գաբու, Պին Պիր Զեյիտին դիմաց
ԱՐԱՄ ԳԱՐԱԳԱՅԵԱՆ ամեն առաւօտ կանուխ կը գտնուի
Սկիւտար, Իճաթիյէ, Տողրամաճը փողոց իր բնակարանը
Ամէն օր 3-11 ժամը Պոլիս, Պանգե Գաբու, Պին-Պիր-Զեյիտին դիմաց
Կիրակի օրերը ժամադրութեամբ

Ա. ՊԱՌԻԿ Վ. ԱՃԱՌՈՒՄ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՈՎ



Եթէ կ'ողջէք ամէն տեսակ դոնարե-
ղէններ ունենալ, ածան ու ճաշակաւոր,
թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճա-
շակով պատրաստուած, ժամացոյցներ, ար-
ժաթեայ դաւաղաններ եւլն. դիմեցէ՛ք
Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-Փողոց,
Թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին հա-
մար 100ին 5 մասնաւճար: Կանխիկ գնո-
ղին համար հարիւրին 5 զեղչ: Գործած-
ուած գոնարեղէնները եթէ վաճառուած չեն,
100ին 10 զեղչով ետ կ'առնուին. իսկ ա-
պառիկ գնողներէն՝ 100ին 15 զեղչով:

ՀԵԼՎԵՏԻԱ

Ա. ՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Հրդեհի, կենաց եւ ծովային արկածներու դեմ
ԸՆԴՀԱՆՈՐ ԸՆԴԱՅՈՒՑՈՒՄԻ
Ո. ՍԻՑ ԵՒ ԸՆԿ.
Կալաթ-Պանգե-Թիթիլ-Խան, Բիւ-23, 24, 25



ՅՈՎԱԿԻՓ ՊԱՆՈՎԱՆ

(ՄԵԼՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուղաֆէրիէ Հիւանդանոցին եւ
Պարսկական Վարժարանին

Բերա, Մեծ փողոց, Թագսիմ, բիւ 61
Զըրաճեան արաբման

Պալպալեան ամէն օր ակոյալի ամէն
տեսակ հիւանդութիւններով տառապող-
ները կ'ընդունի, իսկ Ուրբաթ, Կիրակի եւ
Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան
ոեւէ ժամուն կարելի է դիմել: Պալ-
պալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու
չինած ակոյաները: Ցորեկները ակոյա-
քալով տալու համար որոշ վարձք մը չկայ:
Քաշել տուողին կա՛մքէն կախեալ է:
Աղբաւերուն ձրի

ՖԵՆԻՔԱ ՕՐԲԻՇԻԷՆ

ԿԵՆԱՅ, ՀՐԴԵՀԻ, ԾՈՎՈՒ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁԱՇՆՈՐ ՀԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ ԻՎԻԷՆԱ. 1860ԻՆ

Գրասենեակ՝ Հանձնարար խան, բիւ 52, 53, 54, 55, 56

Լիազօր Երկաշաղկապի Գ. ՖԵՐԻՇ Ե

Ֆենիքս Օրբիշիէն Ընկերութեան կենաց ապահովագրութեան օրինակ մը. —
35 տարեկան մէկը որ կ'ողջէ ապահովագրուիլ Ֆենիքս Օրբիշիէն Ընկերութեան
20,000 Ֆր. ի եւ քսանհինգ տարուան համար, տարեկան 925 8) Ֆր. պիտի վճարէ
ու պայմանաժամուն պիտի ստանայ 31,266 Ֆր. հնչուն պրամ տ'որոշվոյն. իսկ եթէ
մեռնի զոր օրինակ, 10 տարիէն, իր ժառանգորդները անմիջապէս պիտի ստանան
21,314.62 Ֆր.: Այս ամէն գումարները ԱՆՈՒՄԱԿԱՆ չեն, այլ ԻՐԱԿԱՆ, եւ Ֆենիքս
Օրբիշիէն Ընկերութիւնն այս դումարներուն վճարումը կ'երաշխաւորէ իր բոլորով:

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԹԵՅԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Պոլիս, Պանգե Գաբու

ձեյալ պէյ խանին կից, բիւ 10

ՍԶՆԻԻ ԹԵՅԵՐ

ԱՃԱՆ ԹԵՅԵՐ

ԹԵՅԻ ԸՆՏԻ ԽՈՒՆՈՒՐԳՆԵՐ

ԵԱՎՐՈՒԵԱՆ-ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԹԵՅԻ ԽՈՒՆՈՒՐԳՆԵՐ

ԱՆՄԱՐՏԵԼԻ

ՏԵՍԱԿՈՎ ԵՒ ԳԻՆՈՎ



Գաւառներէ կ'ընդունուին ամէն քանա-
կութեամբ յանձնարարութիւններ եւ կը
կատարուին ամենայն ճշգրտականութեամբ

ՈՒԷՍԴԸՐՆ

ՀՐԴԵՀԻ ԴԵՍ

Ա. Ն. Գ. Լ. Ի. Ա. Կ. Ա. Ն.

Ա. ՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

ՀԻՄՆ ԵԱԼ 1851ԻՆ



Հաւանաւոր Բանկերու Գումարը Ա. Ո. 6000000
Պարտաւոր Գումարը Բանկերու Գումարը 1250000
Վճարեալ Գումարը Բանկերու Գումարը 410000

Հրապարակիւ ծանօթ Ֆրանս. եւ Գերմ. բն-
կերութեանց դրամագլուխը 100,000ԵԱՆ աւելի չէ
Ուեսթըրն Ընկ. չ'ընդունի զէմ ամէն կար-
գի գործեր կ'ապահովագրէ, վնասները
տեղւոյն վրայ եւ անմիջապէս կը հատու-
ցանէ: Երկաշաղկապի Թուրքիոյ
ԳԱՌԱԿԻ ԱՍՏՈՒԱԾԱՍՏՈՒՐ

Պոլիս, Պանգե Գաբու Անաթոլիական 20, 21, 22

Տեղւոյն եւ Զանգե Ֆրանս. եւ Գերմ. Ընկերութեանց
պարտաւոր Գումարը Բանկերու Գումարը 1250000
100%ԵԱՆ աւելի չէ, Գումարը Անաթոլիական 1250000 եւ
Բն. Գ. Երաշխաւորութեան Ընկերութեան Գումարը:

Պ Ա Լ Ք Ա Ն

ԱՌԱՆՁՆԱՅՆՈՐՀԵԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ի ՍՈՖԻԱ

Դրամագրոշխ, պահեստ ու կրաշխառնորոշեան գումար 7,500,000 ֆրանկ

Դրամատունք Ընկերութեան՝ Պուլկար Աղզ. Դրամատուն՝ Սօֆիա, Անգլեւուստրիական Դրամատուն՝ Լոնտոն, Տոլէ Պանք՝ Պերլին, Օսմ. Կայս. Դրամատուն՝ Բարիդ, Բրէտի Լիոնէ՝ Կ. Պոլիս

Գործակալութիւն՝ Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ Ընդհ. Կերկայացուցիչ Թուրքիոյ ԱՐՇԱԿ ՌԻՆՃԵԱՆ Կոստանդնուպոլիս, Ղալաթիա, Պանք Օթոմանին ղէմ, Թահթապուրն խան

ՏԱՍԸ ՂՐՇ. ՄԻԱՅՆ վճարելով կարելի է ստորեւ եղած շրջանակներէն մէկուն մէջ զետեղել ծանուցում մը **ԶՈՐՍ ԱՆԳԱՄ:**

Ս Ի Մ Օ Ն Թ Է Լ Ե Ա Ն

Արաւից Դերձակ

Չափու վրայ ամէն տեսակ զգեստներու

Պոլիս Հանձնարար խան Իւս 45

7—8

Գ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ

Բերա. Մեծ-Փողոց,

Կալաթա Սերայի յիսկին դէմ, քիւ 200

Դշ. Եշ. Շք. օրերը առաւօտուն կանուխէն

մինչեւ երեկոյ ժամ 11¹/₂;

Բշ. Դշ. Ուր. օրերը 6էն 11¹/₂;

Կիրակի օրերը ժամադրութեամբ

Ա Դ Ա Մ Վ Ա Ր Դ Ե Ա Ն

Վաճառատուն ամէն տեսակ Թոմաթիլէ ապրանաղ

Մեծ-Շուկայ Քիւրթահներու դուռ 41—43

Վաճառատուն ամէն տեսակ հովանոցներու

Սուրբան Համալ, Միսիլի դրամատուն դէմ 58

2—4

ՍՈՒՐԶԱՆԴԱԿ

10 ՓԱՐԱ

10 ՓԱՐԱ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ

ԱՄԷՆ ԱՌԱՒՕՏ ԱՐՇԱԼՈՅՍԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿԷ քաղաքական, աղզ.

գրական, առեւտրական յօդուածներ, տե-

սութիւններ, քրոնիկներ, թղթակցութիւն-

ներ եւ օրուան ամենէն քարմ լուրերը,

Ներքին, Արտաքին, Հեռագիր

Տէր եւ Տնօրէն ՏԻԳՐԱՆ ՃԻՎԷԼԷԿԵԱՆ

20, Պապր Ալի Ճատտէսի, Կ. Պոլիս

Ա Լ Ե Լ Ո Ւ Ի Ա

ԻՆՆԵԱԿ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

Գրեաց՝ Յ. Գ. ՄՐՍԸՐԵԱՆ

Կը ծախուի Կ. Պոլսոյ գրաւաճառներուն քով

Գին 5 դր.

3—4

Լ Ա Ս Է Լ Ե Ր Ի Դ Է

Ապագայագրական ընկերութիւն

Ապակեղինաց եւ հայելիներու կտրելուն դէմ

Ընդհ. Գործաւթ Թուրքիոյ ԱՐՇԱԿ ՌԻՆՃԵԱՆ

Ղալաթիա, Օսմ. Պանքային դէմ

Թահթապուրն խան

14—52

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ՎԱՐԺԱՐԱՆ

Բ Ա Ն Կ Ա Լ Թ Ի

Վարժարանիս տեսչութիւնը յանձնուած է

Կ. Վ. Պալապանեան էֆէնտի, որուն

պէտք է դիմել ամէն կարգի տեղեկու-

թեանց համար:

2—4

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Գերման Բրոֆ. Ա. Ալպրէխտի գործե-

րէն, Սեռային առողջաբանութեան կարե-

ւորագոյն գիտելիքներուն վրայ խօսող

ՄԱՐԴԸ ԵՒ ԻՒՐ ՑԵՂԸ

անուն ժողովրդական գրքին Բ. ապագ-

րութիւնը ի դին 5 դր.

Կեդրոնատեղի Պ. Պալեցց գրատուն

2—4

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

ՍԱՐԳՐԻՏՆԵՐ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ

ՄԱՂԿՈՑԻ ՏՂՈՑ

ՏՊԱԳԻՐ ԵՒ ՁԵՌԱԳԻՐ

Կը սորվեցնէ գրել, կարդալ, գծել, երգեր,

խաղեր, առակներ, հանելուկներ

Գին 50 փարա

Առանց թղթատարի ծախքի, իր գինով

Կը շրջուի ուղղին:

Գինել Մարգարեան գրատուն

4—4